Դատական Գործ N: ՎԴ/0585/05/11

Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:	28-02-2011
Հայցվոր/դիմող	
Անուն	Հասմիկ
Ազգանուն	Օհնիկյան
Հասցե	Ռ.Մելիքյան 80ա
Ներկայացուցիչ	
Անուն	Արամ
Ազգանուն	Խաչատրյան
Հասցե	Երզնկյան 81/1
Այլ	Արտոնագիր 1033
Պատասխանող	
Անուն:	ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն
Հասցե:	Մաշտոցի 13ա
Ինքնուրույն պահանջ ներկայացնող:	
3-րդ անձ	
Անուն:	ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հասցե:	Մելիք-Ադամյան փ 1շ
Պահանջ:	ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ տրամադրելուն պարտավորեցնելու պ/մ
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	2.1
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Լրացուցիչ պահանջի վիճակագրության տողի համարը:	
Ստացման կարգը:	Առաջին անգամ
Այլ նշումներ:	

Ամսաթիվ:	28-02-2011
Պետ. տուրք (ՀՀ դրամ):	4000
Այլ նշումներ:	

Ամսաթիվ:	28-02-2011
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Վարչական
Դատավորի անուն:	Արա Բաբայան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Վարչական

Դատավորի անուն:	
Այլ նշումներ:	

Որոշման ամսաթիվ:	04-03-2011

Դատաքննության ամսաթիվ:	16-05-2011
Ծանուցագիրը ուղարկվել է:	25-03-2011
Այլ նշումներ:	Նախնական դատական նիստ
Ժամ:	15:30
Նիստերի դահլիճի համար:	317

Դատաքննության ամսաթիվ:	13-07-2011
Ծանուցագիրը ուղարկվել է:	10-06-2011
Այլ նշումներ:	Նախնական դատական նիստ
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համար:	317

Դատաքննության ամսաթիվ:	23-09-2011
Ծանուցագիրը ուղարկվել է:	22-07-2011
Այլ նշումներ:	
Ժամ:	15:00
Նիստերի դահլիճի համար:	317
Նշանակվել է:	Նախնական դատական նիստ

Դատաքննության ամսաթիվ:	14-10-2011
Ծանուցագիրը ուղարկվել է:	23-09-2011
Այլ նշումներ:	
Ժամ:	16:00
Նիստերի դահլիճի համար:	317
Նշանակվել է:	Դատաքննություն

Դատաքննության ամսաթիվ:	28-10-2011
Ծանուցագիրը ուղարկվել է:	14-10-2011
Այլ նշումներ:	
Ժամ:	17:40
Նիստերի դահլիճի համար:	317
Նշանակվել է:	Վճիռ/որոշում հրապարակելու օր
Նիստը:	
Պատճառը:	

Հայցի լուծման ամսաթիվ:	28-10-2011
Հայցի լուծումը:	Մասով բավարարվել է մասով կարճվել

Հոդված	
Հոդված	59-րդ, 112-115-րդ, 117.2-րդ.
Հակընդդեմ հայցի լուծումը:	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Այլ նշումներ:	

Դատական ակտ:	գործ թիվ ՎԴ/0585/05/11 Վ Ճ Ի Ռ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 28 հոկտեմբերի 2011թ. ք.Երևան Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը՝ Նախագահությամբ դատավոր՝ Ա.ԲԱԲԱՅԱՆԻ Քարտուղարությամբ՝ Ն.ՉԻԹՉՅԱՆԻ Մասնակցությամբ՝ Պատասխանողի ներկայացուցիչ՝ Ա.ՍԱՐԳՍՅԱՆԻ Երրորդ անձի ներկայացուցիչ՝ Ն.ԱՄԱՏՈՒՆՈՒ 2011 թվականի հոկտեմբերի 14-ին, Երևան քաղաքում, դատարանում, դռնբաց դատական նիստում, քննեց թիվ ՎԴ/0585/05/11 վարչական գործն ըստ հայցի Հասմիկ Օհնիկյանի (անձնագիր AF 0485815, տրված 06.06.2002թ. 004-ի կողմից) ընդդեմ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ 25/01-4725 գրությունն անվավեր ճանաչելու պահանջների մասին: Գործի դատավարական նախապատմությունը. Հայցվոր Հասմիկ Օհնիկյանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության, խնդրելով պարտավորեցնել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը իրեն տրամադրել Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը, ինչպես նաև խնդրել է դատական ծախսերին անդրադառնալիս ծախսերի մեջ ներառել նաև ներկայացուցչի ողջամիտ վարձատրությունը՝ 170,000 ՀՀ դրամի չափով: 04.03.2011թ. որոշմամբ Հասմիկ Օհնիկյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին հայցադիմումն ընդունվել է ՀՀ վարչական դատարանի վարույթ, այնուհետև հրավիրվել է նախնական դատական նիստ: Թիվ ՎԴ/0585/05/11 վարչական գործով հրավիրված նախանական դատական նիստում դատարանի պահանջով հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացվել են Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի մայր, օրինական ներկայացուցիչ՝ Թագուհի Օհնիկյանի իսպաներեն լեզվով տրված, նոտարական կարգով վավերացված հայտարարությունը և դրա նոտարական կարգով վավերացված հայերեն լեզվով թարգմանությունը, «Այլեքս» ՍՊ ընկերության և փաստաբան Ա.Խաչատրյանի միջև 10.02.2011թ. կնքված ծառայությունների մատուցման N 040212 պայմանագիրը,

	պատասխանողի ներկայացուցչի կողմից ներկայացվել է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն Հասմիկ Օհնիկյանի կողմից ներկայացված, վերջինիս անվամբ Թագուհի Օհնիկյանի կողմից 30.11.2010թ. հասարակ գրավոր ձևով տրված լիազորագիրը: Թիվ ՎԴ/0585/05/11 վարչական գործով հրավիրված նախնական դատական նիստում հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացվել է հայցադիմումի լրացում, որով հայցվորի ներկայացուցիչը խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության 25/01-4725 գրությունը, որպիսի պահանջը, քննարկումից հետո, հստակեցվել և ձևակերպվել է հետևյալ կերպ՝ անվավեր ճանաչել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության 25/01-4725 գրությունը: Դատարանի արձանագրային որոշմամբ հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումի լրացումը թույլատրվել է: Հայցվորի ներկայացուցիչը խնդրել է դատական ծախսերի կազմի մեջ ներառել նաև Իսպանիայում Թագուհի Օհնիկյանի կողմից տրված հայտարարությունը նոտարական կարգով վավերացնելու համար կատարված ծախսը՝ 43.15 եվրոյին համարժեք ՀՀ դրամի չափով: Թիվ ՎԴ/0585/05/11 վարչական գործով հրավիրված նախնական դատական նիստում, դատարանը քննարկելով պատասխանողի ներկայացուցչի կողմից ներկայացված դատաձեռագրաբանական փորձաքննություն նշանակելու մասին միջնորդությունը, արձանագրային որոշմամբ այն մերժել է: 23.09.2011թ. որոշմամբ, համարելով թիվ ՎԴ/0585/05/11 վարչական գործը դատաքննությանը նախապատրաստված, վարչական գործը նշանակվել է դատաքննության: Հայցվորի պահանջը հայցադիմումում հիմնավորվել է հետևյալ փաստարկներով. 22.11.10թ. Թագուհի Հակոբի Օհնիկյանը դիմել է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն՝ խնդրելով իր որդուն՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Այբերտոյի Ռենդոն Օհնիկյանին, ծնված 19.02.2008թ. տրամադրել ՀՀ-ում կացության ժամանակավոր կարգավիճակ: 30.11.2010թ. Թագուհի Հակոբի Օհնիկյանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Վարչարարության հիմքունքների ե վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով՝ լիազորել է իր քրոջը՝ Հասմիկ Հակոբի Օհնիկյանին՝ իր անունից հանդես գալու ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում՝ ստանալու իր որդու՝ Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը: 12.01.2011թ. Հասմիկ Հակոբի Օհնիկյանը ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն է ներկայացրել դիմում, անձը հաստատող փաստաթուղթը և լիազորագիրը՝ Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը ստանալու համար: 31.01.2011թ. ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից Հ. Օհնիկյանին հասցեագրված թիվ 25/01-4725 գրությամբ վերջինիս մերժվել է փաստաթղթի տրամադրումը պատճառաբանելով, որ «վարչական վարույթը եզրափակված է, վերջինս չի մասնակցել վարչական վարույթին, և փաստաթուղթը տրամադրելու պահանջը իրավաչափ չէ»: 11.02.2011թ. Հասմիկ Օհնիկյանը դիմել է «Այլեքս» փաստաբանական գրասենյակ իր խախտված իրավունքների վերականգնման նպատակով: ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը թիվ 25/01-4725 գրությամբ խախտել է՝ 1. «Վարչարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը, որի համաձայն վարչական վարույթում վարույթի մասնակիցները կարող են մասնակցել ինքնուրույն, իրենց ներկայացուցիչների միջոցով կամ նրանց հետ միասին: Վարչական

	վարույթում որպես վարույթի մասնակիցների ներկայացուցիչներ կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով լիազորված անձինք, այդ թվում՝ փաստաբաններ: Լիազորագրի համար նոտարական վավերացում չի պահանջվում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Սույն գործի փաստական հանգամանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Թագուհի Օհնիկյանը լիազորագրով լիազորել է իր քրոջը՝ Հասմիկ Օհնիկյանին, որպեսզի վերջինս ստանա վարչական մարմի կողմից կայացված ակտը, որով վարչական մարմինը իրավունքներ է սահմանել Օհնիկյանի որդու՝ Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի համար: ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչությունը նշել է, որ քանի որ վարչական վարույթի ընթացքում Հասմիկ Օհնիկյանը հանդես չի եկել, այդ պահին նրան տրված լիազորագիր չի եղել, ուստի և հետագայում, վարչական ակտը կայացնելուց հետո վերջինս չի կարող այլևս ներկայացնել Թագուհի Օհնիկյանի իրավունքները և օրինական շահերը, այսինքն ստանա Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի նկատմամբ կայացված վարչական ակտը: Նշվածը պնդումը չի տեղավորվում բանական դատողության շրջանակներում, քանի որ լիազորագիրը կարող էր տրվել և մինչև վարչական վարույթը, և վարչական վարույթի ընթացքում, և վարչական վարույթի ավարտից հետո, ցանկացած փուլում անձի իրավունքները և շահերը ներկայացնելու նպատակով, և թե որ պահից սկսած Թագուհի Օհնիկյանն իրավունք ունի իր իրավունքների և օրինական շահերի ներկայացումը լիազորել երրորդ անձանց ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության իրավասությանը բարեբախտաբար վերապահված չէ: «Վարչարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է: Այսինքն վարչական վարույթի վերջնական նպատակ է հանդիսանում վարչական ակտի կայացումը: Նույն օրենքի 53-րդ հոդվածի համաձայն վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Նշված նորմերի տառացի մեկնաբանությունից պարզ է դառնում, որ վարչական վարույթի վերջնական նպատակը անձի համար կոնկրետ իրավունքներ և պարտականություններ սահմանելը, փոփոխելը, վերացնելը կամ ճանաչելն է: ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը թիվ 25/01-4725 Հ.Օհնիկյանին հասցեագրված գրությամբ վերջինիս մերժել է փաստաթղթի տրամադրումը պատճառաբանելով, որ «վարչական վարույթը եզրափակված է»: Եթե վարչական վարույթի նպատակն անձին իրավունքներ տրամադրելն է, ապա անտրամաբանական և ոչնչով բացատրելի չի կարող լինել այն, որ վարչական մարմինը սահմանել է անձի համար որոշակի իրավունքներ կամ պարտականություններ և այն չի տրամադրում նրան, քանի որ այդ ակտը կայացրել է և վարչական վարույթն ավարտված է: Նույն տրամաբանությամբ այդ փաստաթուղթը չպետք է տրամադրվի նաև Թագուհի Օհնիկյանին, քանի որ վարչական վարույթն ավարտված է նաև վերջինիս համար, և փաստորեն, վարույթի ավարտմամբ, նա ևս դադարել է վարույթի մասնակից լինելուց: Ավելին, ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով հասարակ գրավոր լիազորագրով հանդես եկող անձին վարչական ակտը

	հանձնելու իրավաչափության և դրանով վարչական ակտի հասցեատիրոջ իրավունքները խախտված դիտելու հարցին, իր ՎԴ3/0027/05/08/2010 գործով հանգել է այն հետևությանը, որ վարչական ակտը լիազորված անձին հանձնելը հավասարեցվում է այն հասցեատիրոջը հանձնած լինելուն և հետևաբար՝ հասցեատիրոջ իրավունքները համարվում են պահպանված: Այսպիսով, պատասխանողը, անտեսելով Թ. Օհնիկյանի՝ լիազորագրով ամրագրված իր փոխարեն փաստաթուղթը վերջինիս քրոջը հանձնելու վերաբերյալ կամաարտահայտությունը, կամայականորեն մերժել է փաստաթղթի տրամադրումը: 2. ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը խախտել է նաև «Վարչարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը, որի համաձայն վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են: Հասմիկ Օհնիկյանի պարտականությունը վարչական մարմնին իր անձը հաստատող փաստաթուղթը և լիազորագիր ներկայացնելն է եղել, որն էլ վերջինս բովանդակային առումով կատարել է, որը հաստատված է նաև թիվ 25/01-4725 գրությամբ, ուստի և ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը անիրավաչափ անգործություն է դրսևորել՝ իրավունքը հաստատող ակտը չտրամադրելով Թագուհի Օհնիկյանի կողմից լիազորված անձ Հ.Օհնիկյանին: ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը խախտել է նաև «Վարչարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը, որի համաձայն վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր: Ինչպես արդեն նշվեց վարչական վարույթի վերջնական նպատակ է հանդիսանում անձի համար իրավունքներ սահմանելը և տրամադրելը վերջինիս /այդ թվում նաև նրա կողմից լիազորված անձին/: Այդ նպատակն է հետապնդում նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը և որի իրականացման պարտականությունը դրված է վարչարարություն իրականացնող մարմինների, այդ թվում և ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության վրա, որը դրսևորելով անգործություն կամայականորեն մերժել է անձին իր իրավունքները տրամադրելը: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի համաձայն անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը (այսուհետ՝ ակտ): Պատասխանող ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը հայցադիմումի պատասխանում ներկայացրել է հետևյալ դիրքորոշումն ու դրա հիմքում դրված պատճառաբանությունները. Ամբողջությամբ առարկում են հայցի դեմ և գտնում, որ այն անհիմն է և ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ. Ներկայացված հայցում, հայցվորը վկայակոչել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները և ՀՀ վճռաբեկ դատարանի ՎԴ3/0027/05/08/2010 գործով կայացրած որոշումը և յուրովի ու կամայական եզրահանգել, որ ՀՀ ոստիկանության ԱՎ վարչությունը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 8-րդ և 23-րդ հոդվածները ու դրսևորել ոչ իրավաչափ անգործություն՝

Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի օրինական ներկայացուցիչ՝ Թագուհի Օհնիկյանի կողմից լիազորված անձ՝ Հասմիկ Օհնիկյանին չտրամադրելով Նարեկ Օհնիկյանի ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը:
Հայցվորը ներկայացրած հայցում բացահայտ անտեսել է այն էական նշանակություն ունեցող հանգամանքը, որ բացի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքից և ՀՀ քաղաքացիական օրենսգրքից, սույն վարչական գործով անմիջականորեն կիրառման են ենթակա «Օտարերկրացիների մասին» 25.12.2006թ. ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 07.02.2008թ. թիվ 134-Ն որոշման դրույթները, որոնք ըստ էության ուղղակիորեն կանոնակարգում են օտարերկրացիների կողմից ՀՀ-ում ժամանակավոր, մշտական և հատուկ կացության կարգավիճակները և դրանք հաստատող փաստաթղթերը ստանալու առնչությամբ ծագող և գործող իրավահարաբերությունները:
«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 3-րդ, 4-րդ հոդվածները, 5-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, 14-րդ և 15-րդ հոդվածները
կանոնակարգում են օտարերկրացիներ, ժամանակավոր կացության կարգավիճակ,
Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիների իրավական վիճակի
մասին օրենդրություն, օտարերկրացիների իրավական վիճակի սկզբունքներ, ՀՀ-
ում օտարերկրացիների պարտականություններ և պատասխանատվություն, օտարերկրացիների կացության ժամանակավոր, մշտական և հատուկ կարգավիճակները, կարգավիճակները հաստատող փաստաթղթեր, ժամանակավոր կացության կարգավիճակ տալու հիմքեր և ժամկետներ հասկացությունները:
Նույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմումը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմին: Ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու դիմումի քննարկման կարգը, դիմումի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
Օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածների 2-րդ մասերի պահանջներից անմիջականորեն բխում է ՀՀ կառավարության 07.02.2008թ. «Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու (կացության կարգավիճակը երկարաձգելու) դիմումի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դիմումի քննարկման կարգը, ժամանակավոր կացության քարտի, մշտական կացության քարտի և Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագրի նկարագրերը և ձևերը հաստատելու մասին» թիվ 134-Ն որոշումը: Որոշման ցանկի 1-ին կետում նշված են այն փաստաթղթերը, որոնք օտարերկրացիները ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու (կացության կարգավիճակը երկարաձգելու) համար դիմումի հետ ներկայացնում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն:
Որոշման ցանկի 2-րդ կետում նշված է, որ անձնագրային և վիզաների վարչությունում կացության կարգավիճակ ստանալու համար դիմող օտարերկրացին Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի թիվ 134-Ն որոշման թիվ 1 հավելվածի 1-ին կետում նշված փաստաթղթերը ներկայացնելիս լրացնում է դիմում-հարցաթերթիկ՝ համաձայն ձևի: Որոշմամբ սահմանված կարգի 6-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության

	կարգավիճակ ստացած օտարերկրացիներին տրվում է համապատասխանաբար ժամանակավոր կացության կամ մշտական կացության քարտ: Հայցվոր կողմը, ներկայացված հայցում անհիմն կերպով վիճարկելով գործով պատասխանողի՝ ԱՎ վարչության դրսևորած իրավաչափ անգործությունը, նշել է, որ ԱՎ վարչությունը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը, որի 1-ին կետի համաձայն վարչական վարույթում վարույթի մասնակիցները կարող են մասնակցել ինքնուրույն, իրենց ներկայացուցիչների միջոցով կամ նրանց հետ միասին: Վկայակոչվել է նաև նույն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետը, որի համաձայն վարչական վարույթում որպես վարույթի մասնակիցների ներկայացուցիչներ կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով լիազորված անձինք, այդ թվում՝ փաստաբանները: Հայցվորը, ներկայացված հայցում յուրովի և կամայականորեն մեկնաբանելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, հաշվի չի առել և անտեսել է այն էական նշանակություն ունեցող հանգամանքը, որ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանը (ծնված 19.02.2008թ.), որպես տասնչորս տարեկան չդարձած անչափահաս (փոքրահասակ), ինքնուրույն չէր կարող մասնակցել ու հանդես գալ վարչական վարույթում: Բացահայտ անտեսվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ պարբերությունը, որն, ըստ էության, կիրառվել է ԱՎ վարչության կողմից վարչական վարույթի ընթացքում, և այն նույնպես կիրառման է ենթակա սույն վարչական գործով, որի համաձայն վարույթի անգործունակ մասնակիցներին վարչական վարույթում ներկայացնում են նրանց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված օրինական ներկայացուցիչները: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ հոդվածի համաձայն տասնչորս տարեկան չդարձած անչափահասների (փոքրահասակների) փոխարեն գործարքները, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետում նշվածների, նրանց անունից կարող են կնքել միայն նրանց ծնողները, որդեգրողները կամ խնամակալները: «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը: ՀՀ ոստիկանության ԱՎ վարչությունը, Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի՝ ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը չտրամադրելով Թագուհի Օհնիկյանի լիազորած անձ՝ Հասմիկ Օհնիկյանին՝ դրսևորել է իրավաչափ անգործություն: Թագուհի Օհնիկյանը, 22.11.2010թ. դիմում է ներկայացրել ԱՎ վարչություն, որդուն՝ ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրելու խնդրանքով, որպիսի հանգամանքը դիտվում է որպես վարչական վարույթի հարուցում, իսկ 23.11.2010թ. վարչական մարմնի կողմից Թ.Օհնիկյանի դիմումը բավարարվել է, այսինքն՝ վարչական վարույթը եզրափակվել է բարենպաստ վարչական ակտի ընդունմամբ, որի կապակցությամբ դիմումատուն տեղեկացվել է այդ մասին և հրավիրվել ԱՎ վարչություն՝ որպես կանոն գրավոր վարչական ակտը ստորագրությամբ իրեն՝ որպես վարույթի մասնակցի, առձեռն հանձնելու համար, սակայն Թ.Օհնիկյանը չի ներկայացել, միաժամանակ վերջինս չի խնդրել կամ միջնորդել իր չներկայանալու պարագայում կիրառել հանձնման այլ միջոցներ: Թ.Օհնիկյանը 30.11.2010թ. լիազորագիր է ներկայացրել

	Հասմիկ Օհնիկյանի անվամբ, որպեսզի նա ԱՎ վարչությունից ստանա Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը: Հ.Օհնիկյանը այդ լիազորագրով 12.01.2011թ. դիմել է ԱՎ վարչություն, երբ վարչական վարույթը 23.11.2010թ. արդեն իսկ եզրափակված է եղել վարչական ակտի ընդունմամբ, և պահանջել է իրեն տրամադրել նշված փաստաթուղթը, որպիսի պայմաններում Հ.Օհնիկյանի ոչ իրավաչափ պահանջը մերժվել է: Բացի այդ, ներկայացված հայցում, հայցվորը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 8-րդ կետի կարգով խնդրել և միջնորդել է այն մասին, որ դատարանի կողմից դատական ծախսերին անդրադառնալիս, ծախսերի մեջ ներառել նաև ներկայացուցչի ողջամիտ վարձատրությունը, այն է՝ 170,000 ՀՀ դրամը: Գործով պատասխանողին ուղարկված հայցադիմումից բխում է, որ հայցվոր կողմը ՀՀ վարչական դատարան և գործով որպես երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարություն է ուղարկել հայցադիմումին կից ներկայացված՝ փաստաբանական գրասենյակի հետ կնքված պայմանագրի պատճեն, որը, սակայն, չի ուղարկվել պատասխանողին, այն պարագայում, երբ հայցն, ըստ էության ուղղված է պատասխանողի դեմ, և միաժամանակ բացակայում է հայցվոր կողմի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 3-րդ մասի կարգով կատարված ծանուցումը կամ միջնորդությունն այն մասին, որ հայցադիմումին կից փաստաթղթերը ծավալուն են, կամ դրանք դժվար է պատճենահանել, և որ նշված փաստաթղթերը, դրանք ծանոթանալու նպատակով դեպոնացվելու են դատարանում: ՀՀ ոստիկանության ԱՎ վարչությունը ներկայացված հայցի առնչությամբ այլ առարկությունները և դրանք հիմնավորող փաստերն ու ապացույցները կներկայացնի դատական քննության ընթացքում: Երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչը հայցադիմումի պատասխանում ներկայացրել է հետևյալ դիրքորոշումն ու դրա հիմքում դրված պատճառաբանությունները. Նախարարությունը հայցադիմումի պատասխանում անդրադառնում է հայցադիմումով ներկայացված դատական պաշտպանության համար կատարված ծախսերի հատուցման չափին. Նախարարությունը գտնում է, որ հայցադիմումով ներկայացված փաստաբանական ծառայությունների մատուցման համար ծախսերի գումարը՝ 170,000 ՀՀ դրամի չափով, համաչափ չէ խախտմանը: Այսինքն՝ հայցվորի կողմից ներկայացվել են ոչ ողջամիտ ծախսեր: Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին ՀՀ վարչական դատարան հայց ներկայացնելու և դատական պատշաճ պաշտպանություն ապահովելու համար, կարծում են առնվազն զավեշտ է 170,000 ՀՀ դրամ վճարել իրավաբանական ծառայությունների մատուցման դիմաց, և կարելի է եզրակացնել, որ այստեղ խոսքը գնում է հայցվորի ոչ թե նյութական, այլ հոգեկան բավարարվածության մասին: Հատկանշական է, որ հայցվորը, վերադասելով կատարել 170,000 դրամի վճարում, կանխավ չէր կարող ունենալ որևէ երաշխիք այն մասին, որ դատարանի կողմից իր հայցն ամբողջությամբ բավարարվելու է և ամբողջությամբ կվերականգնվեն իր կողմից կատարված ծախսերը: Թեպետ, սեփական իրավունքների պաշտպանության վրա ծախսվելիք գումարների մեծությունը որոշելու խնդիրը յուրաքանչյուրի իրավունքն է, սակայն դա ոչ մի դեպքում ծախսերի հատուցման հանդիպական պարտականություն Հայաստանի Հանրապետության մոտ չի առաջացնում: Այս պարագայում որպես այդ ծախսերի ողջամիտ չափ, ՀՀ ֆինանսների նախարարության համար ընդունելի է քրեական դատավարության կարգով պետության կողմից տրամադրվող հանրային պաշտպանին վճարվող դատախազի մեկ ժամվա աշխատավարձին համարժեք գումարի

չափը, ուստի այս դեպքում ևս մատուցված ծառայության համար, առավելագույնը կարող է ընդունելի լինել այդ չափով հաշվարկված պահանջը:
ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ ներկայացուցիչներին վճարվող գումարների գծով դատական ծախսի փոխհատուցման չափը որոշելիս դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափերը:
Ի հավաստումն վերը նշված հանգամանքի, հաշվի առնելով ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասը, պետք է վկայակոչել ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/1547/05/10 վարչական գործով 27.07.2010թ. կայացված վճիռը, որում ՀՀ վարչական դատարանը ներկայացուցչին վճարվող գումարի գծով դատական ծախսը փոխհատուցելիս հիմք է ընդունել ոչ թե փաստաբանական ծառայություն մատուցելու պայմանագրում նշված մատուցվող ծառայության համար վարձատրության չափը, այլ ողջամիտ չափը:
Այսպիսով, ՀՀ ֆինանսների նախարարությունը գտնում է, որ իրավաբանական պաշտպանություն իրականացնելու դիմաց ներկայացված ծախսերը ակնհայտ ուռճացված են և ողջամիտ չեն:
Նման համոզմունքը նախարարության մոտ հիմնված ՀՀ դատարաններում ձևավորված իրավակիրառ այն պրակտիկայով, որի պայմաններում դատարանները ներկայացուցիչներին վճարվող գումարների գծով դատական ծախսերը փոխհատուցելիս հիմք են ընդունել ոչ թե փաստաբանական ծառայություն մատուցելու պայմանագրերում նշված մատուցվող ծառայության համար վարձատրության չափը, այլ ողջամիտ չափը: Դիցուք, յուրաքանչյուր ոք սեփական գույքային դրության հնարավորություններից ելնելով, իր իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ իրականացման նպատակով ազատ է ներկայացուցչություն իրականացնողի հետ կնքելու իրավաբանական վճարովի ծառայությունների մատուցման պայմանագիր ցանկացած ցանկացած ծավալով կիրեն դրամական միջոցների մեջ բոլորովին չկաշկանդելով: Պայմանավորվող կողմերի միջև նյութական իրավունքի նորմով (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք) երաշխավորված ցանկացած պայման հաստատելու ազատության իրավունքը թույլ է տալիս ցանկացած մեկին իր իրավունքների դատական պաշտպանությունն իրականացնելու նպատակով վարձել ասենք Նյու Յորքում գործող "Cramer & Yung" փաստաբանական ընկերության 200-ից մինչև 1000 ԱՄՆ դոլար ժամավճարով աշխատող փաստաբանին և մի քանի տասնյակ հազար ԱՄՆ դոլար ընդհանուր արդյունքով «հաջողությամբ» հատել ՀՀ բոլոր ատյաններով անցնելու եզրագիծը: Դա, իհարկե, բնավ չի նշանակում, որ դատարանը նյույորքյան թանկարժեք փաստաբանի մասնակցությամբ ներկայացվողի օգտին վճիռ կայացնելու դեպքում անվերապահորեն պետք է բավարարի նաև փաստաբանին վճարված գումարն ամբողջությամբ: Նման տրամաբանությամբ շարժվելու դեպքում իրավունքների պաշտպանության վրա ծախսվելիք գումարների վճարման պայմանի ազատությունը պայմանավորվող կողմերի միջև կբացարձակացվի, այդ նպատակով կատարվելիք ծախսերի վեկտորը յուրաքանչյուրի տրամադրությունից ու գրպանի պարունակությունից կախված (օրինակ՝ Հայաստանում միշտ էլ «նեղացած» մեծահարուստ կգտնվի) երկրաչափական պրոգրեսիայով կձգտի անսահմանության և դատարաններն էլ այդ գումարները ստիպված պետք է գանձեն բարեխիղճ հարկատուների գրպաններից:
Գտնում են, որ դատական ծախսերը չեն կարող բռնազանձվել հայցվորի պահանջած գումարի չափով՝ ողջամտության սահմաններից դուրս լինելու պատճառաբանությամբ:
Հայցադիմումի լրացմամբ ներկայացված պահանջը հիմնավորվել է հետևյալ փաստարկներով.
12.01.2011թ. Հասմիկ Հակոբի Օհնիկյանը ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն է ներկայացրել դիմում, որը

համապատասխանելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված վավերապայմաններին՝ նույն օրենքի 30-րդ հոդվածի ուժով հանդիսացել է վարչական վարույթի հարուցման հիմք:
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն վարչական վարույթը բաղկացած է միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից: Վարչական վարույթը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ):
12.01.2011թ. Հասմիկ Հակոբի Օհնիկյանի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթն ավարտվել է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից Հ.Օհնիկյանին հասցեագրված թիվ 25/01-4725 գրությամբ՝ այսինքն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի համաձայն արտաքին ներգործություն ունեցող անհատական իրավական ակտով, որը վարչական մարմինն ընդունել է մերժելով անձի իրավունքների իրականացումը, այնքանով որքանով ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը Հ.Օհնիկյանին մերժել է, որպես Թ.Օհնիկյանի ներկայացուցչի տրամադրել հայցվող փաստաթուղթը պատճառաբանելով, որ «վարչական վարույթը եզրափակված է, վերջինս չի մասնակցել վարչական վարույթին, և փաստաթուղթը տրամադրելու պահանջը իրավաչափ չէ»:
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածը սահմանում է, որ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝ օրենքի խախտմամբ, այդ թվում օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում, գտնում են, որ ՀՀ ոստիկանության անձնագրային ե վիզաների վարչության կողմից Հ.Օհնիկյանին հասցեագրված թիվ 25/01-4725 գրությունը հանդիսանում է ոչ իրավաչափ վարչական ակտ, քանի որ ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում, այնքանով որքանով անտեսելով օրենքով սահմանված կարգով տրված լիազորագրի առկայությունը, մասնավորապես, որի 1-ին կետով Հ.Օհնիկյանը լիազորված է եղել Թագուհի Օհնիկյանի կողմից նրա անունից հանդես գալ ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչությունում և իր փոխարեն ստանալ վերջինիս որդու Նարեկ Լուիս Ռենդոնի կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթը, մերժել է տվյալ փաստաթղթի տրամադրումը պատճառաբանելով, որ «վարչական վարույթը եզրափակված է, Հ.Օհնիկյանը չի մասնակցել վարչական վարույթին, և փաստաթուղթը տրամադրելու պահանջը իրավաչափ չէ», ինչը, կարծում է, ոչ միայն ոչ իրավաչափ է այլ նաև հակատրամաբանական:
Միաժամանակ, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ 25/01-4725 գրությամբ, ոչ մի անդրադարձ չի կատարվել ներկայացված լիազորագրի արժանահավատության հարցին, ինչը նախորդ դատական նիստի ընթացքում արծարծվում էր պատասխանողի ներկայացուցչի կողմից, ուստի գտնում են, որ տվյալ հարցը դուրս է գործի քննության շրջանակներից:
Այնուամենայնիվ, ի կատարում դատարանի պահանջի՝ իրենց կողմից ներկայացվել է Թագուհի Օհնիկյանի կողմից տրված թիվ 2287 լիազորագիրը՝ համապատասխան թարգմանությամբ, վավերացված Իսպանիայի Մարբելյա (Մալագա) քաղաքի նոտար Ռաֆայել Ռեկեմա Կաբո-ի կողմից, որը ոչ այլ ինչ է, քան հայտարարություն կատարված Թագուհի Օհնիկյանի կողմից, որով վերջինս հաստատում է, որ լիազորել է Հասմիկ Հակոբի Օհնիկյանին, որպեսզի նա լիազորողի անունից կարողանա ստանալ լիազորողի որդի Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ռենդոնի կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթը:

Եզրափակելով ցանկացավ անդրադառնալ նաև դատական ծախսերի հիմնավորվածության հարցին և ի կատարումն դատարանի պահանջի, ներկայացնել իր՝ Արամ Վարուժանի Խաչատրյանի և «Այլեքս» փաստաբանական գրասենյակի միջև կնքված Ծառայությունների վճարովի մատուցման լիազորությունների պատվիրակման թիվ 040212 պայմանագիրը, ինչպես նաև Թագուհի Օհնիկյանի կողմից վերոնշյալ լիազորագիր-հայտարարության կատարման կապակցությամբ իրականացված 43 եվրո ծախսը հավաստող ապացույցը (վավերացված թարգմանությամբ), խնդրելով դատական ծախսի բաշխման հարցը որոշելիս նաև անդրադառնալ տվյալ գումարին:
Պատասխանող ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը հայցադիմումի լրացման պատասխանում ըստ էության հիմնականում ներկայացրել է հետևյալ դիրքորոշումն ու դրա հիմքում դրված պատճառաբանությունները.
Հայցադիմումի լրացումից ակնհայտ է, որ հայցվոր կողմը հայցադիմումում հղումներ կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ, 67-րդ և 85-րդ հոդվածներին, ներկայացրել է վիճարկման և գործողության կատարման հայցեր:
Հայցադիմումի լրացմամբ հայցվոր կողմը փոփոխել է հայցի առարկան և գործողության կատարման հայցի հետ մեկտեղ դատարան է ներկայացրել նաև վիճարկման հայց և անհիմն կերպով վիճարկել է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության 31.01.2011թ. թիվ 25/01–4725 գրությունը, որը հանդիսանում է որպես «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթներին խիստ համահունչ ընդունված իրավաչափ միջամտող վարչական ակտ:
Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, վիճարկման հայցի դեպքում հայցը դատարան կարող է ներկայացվել երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից, հետևաբար՝ սույն վարչական գործով հայցվոր կողմը անհարգելի կերպով բաց է թողել և խախտել է վիճարկման հայց ներկայացնելու համար օրենսդրությամբ սահմանված դատավարական ժամկետը, մինչդեռ այն մինչև 13.07.2011թ. ներկայացնելու ողջամիտ հնարավորություն ունեցել է, ուստի գտնում են, որ վիճարկման հայցի մասով հայցադիմումը պետք է մերժվի վերը նշված հիմքով:
Ամբողջությամբ առարկում են ներկայացված պահանջների դեմ, գտնում են, որ դրանք անհիմն են և ենթակա են մերժման:
Երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հայցադիմումի լրացման վերաբերյալ պատասխան չի ներկայացվել:
Պատասխանողի կողմից ներկայացված հայցադիմումի լրացման պատասխանի վերաբերյալ հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացվել են գրավոր առարկություններ հետևյալ դիրքորոշմամբ.
Պատասխանողը 27.07.2011թ. ներկայացված հայցադիմումի պատասխանում նշել է, որ իր կողմից անհարգելի կերպով բաց է թողնվել և խախտվել է վիճարկման հայց ներկայացնելու օրենսդրությամբ սահմանված ժամկետը, այն է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված երկամսյա ժամկետը:
Հայցը ներկայացվել է 25.02.2011թ., ինչ վերաբերում է 13.07.2011թ. ներկայացված փաստաթղթին, ապա այն իրենից ներկայացնում է, ոչ թե նոր հայցադիմում, այլ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով սահմանված կարգով հայցի և հիմքի, և առարկայի փոփոխություն հայցադիմումի լրացման տեսքով:
Հետևաբար՝ գտնում է, որ պատասխանողի ներկայացրած փաստարկը չի բխում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի տրամաբանությունից, քանի որ համաձայն նույն օրենսգրքի 85-րդ հոդվածի հայցվորը հայցի հիմքը կամ առարկան կարող է փոփոխել մինչև դատաքննություն նշանակելը, այսինքն՝ գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում, որը պետք է

	իրականացվի ողջամիտ ժամկետներում: Դատարանը կարող է թույլ չտալ նման փոփոխություն, եթե այն բերում է հայցի էության փոփոխության: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները, ուստի, գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածում բացակայում է գործի նախապատրաստելու ընթացքում հայցադիմումը փոփոխելու հայցվորի իրավունքի ժամկետային որևիցե սահմանափակում, օրենսդիրը նմանատիպ սահմանափակում նախատեսել է միայն այն դեպքում, երբ ներկայացված փոփոխությունը կարող է բերել հայցի էության փոփոխության, ինչն ամենևին էլ ինքնանպատակ չէ, քանի որ գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով գործը դատաքննության նախապատրաստելու գործընթացը, ելնելով դրա բարդությունից, կարող է տևել ավելին, քան ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածով նախատեսված ժամկետները, հետևաբար, գտնում է, որ տվյալ հոդվածով սահմանված ժամկետներով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված հայցվորի իրավունքը կաշկանդելը անհարկի սահմանափակում է հայցվորի թե ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով, թե Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը: Ուստի, ամբողջ ծավալով պնդում է թե 25.02.2011թ. ներկայացված հայցադիմումը, թե դրա լրացումը՝ ներկայացված 13.07.2011 թ. : Դատաքննությամբ կողմերի հայտնած դիրքորոշումն ու հետազոտված ապացույցները. ՀՀ վարչական դատարան 11.10.2011թ. Մ-33987 մուտքի համարով մուտքագրվել է հայցվորի ներկայացուցչի «Բացման խոսք» վերանգրված գրությունը, որով վերջինս պնդելով ներկայացված պահանջները, միջնորդել է գործը քննել իր բացակայությամբ ներկայացված նյութերի հիման վրա: Վերոգրյալ միջնորդության հիման վրա, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գործը քննվեց հայցվոր Համիկ Օհնիկյանի ներկայացուցչի բացակայությամբ: Պատասխանողի ներկայացուցիչը, ըստ էության հիմնականում հայտնելով հայցադիմումի, հայցադիմումի լրացման պատասխաններում ներկայացված դիրքորոշումներն ու փաստարկները՝ ներկայացված պահաջների դեմ ամբողջությամբ առարկեց: Հավելեց նաև, որ առարկում է հայցվորի ներկայացուցչի վարձատրությունը՝ նշված 170,000 ՀՀ դրամը դատական ծախսերի մեջ ներառելու պահանջի դեմ, քանի որ նշված գումարը կամայական է և դրա ողջամտությունը որևէ կերպ չհիմնավորվեց: Երրորդ անձի ներկայացուցիչը, ըստ էության հիմնականում հայտնելով հայցադիմումի պատասխանում ներկայացված դիրքորոշումներն ու փաստարկները, առարկեց դատական ծախսերի ծավալի մեջ հայցվորի ներկայացուցչի վարձատրությունը 170,000 ՀՀ դրամի չափով ներառելու դեմ: Հայտնեց նաև, որ առարկում է դատարանի պահանջով ներկայացված Իսպանիայում Թագուհի Օհնիկյանի կողմից արված հայտարարությունը նոտարական կարգով վավերացնելու համար կատարված ծախսը դատական ծախսերի մեջ ներառելու պահանջի վերաբերյալ, քանի որ որևէ ապացույց չներկայացվեց, որ նշված ծախսը կատարվել է հայցվորի կողմից: Նշեց նաև, որ հայցադիմումի պատասխանում մատնանշված թիվ ՎԴ/1547/05/10 վարչական գործը սույն վարչական գործի հետ նույնանման է իր ծավալներով և բարդությամբ: Հետազոտվել են հայցադիմումին կից, ինչպես նաև դատարանի

	պահանջով կողմերի ներկայացուցիչների կողմից ներկայացված, վարչական գործում առկա փաստաթղթերը: Դատաքննությամբ հաստատված փաստական հանգամանքները և դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումները. Դատաքննությամբ հետազոտված ապացույցներով, դրանցից յուրաքանչյուրը գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ դատարանը գտավ, որ ըստ հայցի Հասմիկ Օհնիկյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ 25/01-4725 գրությունն անվավեր ճանաչելու պահանջների մասին թիվ ՎԴ/0585/05/11 վարչական գործի վարույթը ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ 25/01-4725 գրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասով պետք է կարճել, իսկ Հասմիկ Օհնիկյանի հայցն ընդդեմ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասով պետք է բավարարել, հետևյալ դատաքննությամբ հաստատված հանգամանքներով, պատճառաբանություններով և եզրահանգումներով. Դատարանը հաստատված է համարում այն հանգամանքը, որ Թագուհի Օհնիկյանը 22.11.2010թ. դիմել է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիազաների վարչությանը՝ իր որդուն՝ Իսպանիայի քաղաքացի, 19.02.2008թ. ծնված Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրելու խնդրանքով, որպիսի խնդրանքը 23.22.2010թ. բավարարվել է՝ այդ մասին ընդունելով բարենպաստ վարչական ակտ: «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետության ժամանակավոր, մշտական և հատուկ կացության կարգավիճակները հաստատող փաստաթղթերն են համապատասխանաբար ժամանակավոր կացության քարտը, մշտական կացության քարտը և հատուկ անձնագիրը, որոնց ձևերը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Նույն օրենքի 15-րդ հոդվածի համաձայն ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է յուրաքանչյուր օտարերկրացու, եթե նա հիմնավորում է, որ գոյություն ունեն Հայաստանի Հանրապետության տարածքում մեկ տարի և ավել ժամկետով իր բնակվելը հիմնավորող հանգամանքներ: Վերոգրյալ իրավանորմերի համաձայն Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրելու խնդրանքը բավարարելու դեպքում, նշված իրավունքը խնդրարկած անձին պետք է տրվի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության քարտ: Փաստորեն, Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի մոր՝ Թագուհի Օհնիկյանի, իր որդուն Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրելու մասին 22.11.2010թ. դիմումի հիման վրա ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում հարուցվել է վարչական վարույթ, որն ավարտվել է 23.11.2010թ.՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանին Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրելու մասին բարենպաստ

	վարչական ակտի ընդունմամբ՝ այսինքն «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի համաձայն իրավունքը խնդրարկած անձին պետք է տրվեր Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության քարտ: Դատարանը հաստատված է համարում այն հանգամանքը, որ Հասմիկ Օհնիկյանն իր անվամբ Թագուհի Օհնիկյանի կողմից 30.11.2010թ. հասարակ գրավոր ձևով տրված լիազորագրի հիման վրա, 12.01.2011թ. դիմում է ներկայացրել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը՝ ժամանակավոր կացության քարտը, ստանալու խնդրանքով: Փաստորեն, Հասմիկ Օհնիկյանը, որպես Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի օրինական ներկայացուցիչ՝ մոր Թագուհի Օհնիկյանի ներկայացուցիչ դիմում է ներկայացրել վարչական մարմնին՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը՝ գործողություն կատարելու՝ վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտը՝ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի համաձայն ձևակերպված ժամանակավոր կացության քարտի տեսքով իրեն տրամադրելու, խնդրանքով: Դատարանը հաստատված է համարում, որ Հասմիկ Օհնիկյանի 12.01.2011թ. դիմումին ի պատասխան ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը 31.01.2011թ. թիվ 25/01-3725 գրությամբ հայտնել է, որ Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելու մասին պահանջն իրավաչափ չէ և ներկայացված լիազորագրով վերջինիս Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը չի կարող տրամադրվել: Փաստորեն, Հասմիկ Օհնիկյանի կողմից, որպես Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի օրինական ներկայացուցիչ՝ մոր Թագուհի Օհնիկյանի ներկայացուցիչ վարչական մարմնին՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը ներկայացված գործողություն կատարելու՝ վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտը՝ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի համաձայն ձևակերպված ժամանակավոր կացության քարտի տեսքով իրեն տրամադրելու մասին դիմումը չի բավարարվել, այսինքն վարչական մարմինը չի կատարել դիմումով խնդրարկված գործողությունը՝ իրականացրել է վարչարարություն, որը դրսևորվել է անգործությամբ, որի մասին գործողություն խնդրարկած անձին հայտնվել է 31.01.2011թ. թիվ 25/01-3725 գրությամբ, որպիսի անգործությունը անձի համար առաջացրել է փաստական հետևանքներ՝ որպես Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի օրինական ներկայացուցիչ՝ մոր Թագուհի Օհնիկյանի ներկայացուցիչ հանդես եկած Հասմիկ Օհնիկյանին չի տրամադրվել դեռևս 23.11.2010թ. ընդունված՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանին Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրելու մասին բարենպաստ վարչական ակտը՝ ձևակերպված «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության քարտի ձևով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն վարչարարությունը դա վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ: Վերոգրյալ իրավանորմի համաձայն՝ վարչական մարմնի

գործունեությունը՝ վարչարարությունը, դրսևորվում և եզրափակվում է ոչ միայն վարչական կամ նորմատիվ ակտի ընդունմամբ, այլ նաև անձանց համար փաստական հետևանքներ առաջացնող գործողությամբ կամ անգործությամբ, ընդ որում վարչական մարմնի գործունեության դրսևորումը և դրա եզրափակումը ուղղակիորեն կապված է կոնկրետ իրականացվող գործունեության՝ վարչարարության բնույթի և իմաստի հետ, այսինքն կապված է այն հանգամանքի հետ, թե վարչարարությունն ինչին է ուղղված՝ ուղղված է վարչական կամ նորմատիվ ակտ ընդունելուն, թե անձանց համար փաստական հետևանքներ առաջացնող որևէ գործողություն կատարելուն:
Վերոգրյալ իրավանորմերից, հաստատված հանգամանքներից, եզրահանգումներից և պատճառաբանություններից ելնելով դատարանը գտնում է, որ Հասմիկ Օհնիկյանի կողմից, որպես Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի օրինական ներկայացուցիչ՝ մոր Թագուհի Օհնիկյանի ներկայացուցիչ վարչական մարմնին՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը ներկայացված գործողություն կատարելու՝ վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտը՝ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի համաձայն ձևակերպված ժամանակվոր կացության քարտի տեսքով իրեն տրամադրելու մասին դիմումի քննարկման արդյունքում Հասմիկ Օհնիկյանի անվամբ հասցեագրված ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության 31.01.2011թ. թիվ 25/01-3725 գրությունը վարչական ակտ չի հանդիսանում՝ վարչական մարմինը չի կատարել դիմումով խնդրարկված գործողությունը՝ իրականացրել է վարչարարություն, որը դրսևորվել է անգործությամբ, որի մասին գործողություն խնդրարկած անձին հայտնվել է 31.01.2011թ. թիվ 25/01-3725 գրությամբ, որպիսի անգործությունը անձի համար առաջացրել է փաստական հետևանքներ՝ որպես Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի օրինական ներկայացուցիչ՝ մոր Թագուհի Օհնիկյանի ներկայացուցիչ հանդես եկած Հասմիկ Օհնիկյանին չի տրամադրվել դեռևս 23.11.2010թ. ընդունված՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանին Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրելու մասին բարենպաստ վարչական ակտը՝ ձևակերպված «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության քարտի ձևով:
ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները:
ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:
Նույն օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը:
Տվյալ դեպքում, հայցվորի ներկայացուցչի կողմից հայցադիմումի լրացմամբ ներկայացված պահանջով ներկայացվել է վիճարկման հայց, որով ներկայացվել է Հասմիկ Օհնիկյանին հասցեագրված ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության 31.01.2011թ. թիվ 25/01-3725 գրությունն անվավեր ճանաչելու

պահանջ, որպիսի գրությունը դատարանի վերոգրյալ եզրահանգումներից ելնելով վարչական ակտ չի հանդիսանում, ուստի այն չի կարող որպես վարչական ակտ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով վիճարկվել, որպիսի պայմաններում դատարանը գտնում է, որ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության 31.01.2011թ. թիվ 25/01-3725 գրությունն անվավեր ճանաչելու պահանջն (վեճը) ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին:
ՀՀ վարչական դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե վեճն ընդդատյա չէ վարչական դատարանին:
Ելնելով վերոգրյալից դատարանը գտավ, որ ըստ հայցի Հասմիկ Օհնիկյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ 25/01-4725 գրությունն անվավեր ճանաչելու պահանջների մասին թիվ ՎԴ/0585/05/11 վարչական գործի վարույթը ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ 25/01-4725 գրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասով պետք է կարճել՝ այդ մասով վեճը վարչական դատարանին ընդդատյա չլինելու հիմքով:
«Վարչարարության հիմունքների և վարչական վորույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն վարչական վարույթում վարույթի մասնակիցները կարող են մասնակցել ինքնուրույն, իրենց ներկայացուցիչների միջոցով կամ նրանց հետ միասին, վարչական վարույթում որպես վարույթի մասնակիցների ներկայացուցիչներ կարող են հանդես գալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով լիազորված անձինք, այդ թվում՝ փաստաբանները: Վարույթի անգործունակ մասնակիցներին վարչական վարույթում ներկայացնում են նրանց՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված օրինական ներկայացուցիչները:
Տվյալ դեպքում ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում վարույթի մասնակից է հանդիսացել փոքրահասակ, Իսպանիայի քաղաքացի, 19.02.2008թ. ծնված Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանը և ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում վարչական վարույթը հարուցվել է վերջինիս մոր՝ օրինական ներկայացուցիչ Թագուհի Օհնիկյանի դիմումի հիման վրա և ինչպես արդեն նշվել է ավարտվել է դիմումով խնդրարկված բարենպաստ վաչական ակտի ընդունմամբ, իսկ Հասմիկ Օհնիկյանն իր անվամբ Թագուհի Օհնիկյանի կողմից 30.11.2010թ. հասարակ գրավոր ձևով տրված լիազորագրի հիման վրա, 12.01.2011թ. դիմում է ներկայացրել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը՝ ժամանակավոր կացության քարտը, ստանալու խնդրանքով:
Դատարանը հաստատված է համարում այն հանգամանքը, որ վարույթի մասնակից Իսպանիայի քաղաքացի, 19.02.2008թ. ծնված Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի մոր՝ օրինական ներկայացուցիչ Թագուհի Օհնիկյանը 30.11.2010թ. հասարակ գրավոր ձևով Հասմիկ Օհնիկյանի անվամբ տրված լիազորագրով, Հասմիկ Օհնիկյանին լիազորել է նաև իր անունից հանդես գալու ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում, այդ թվում իր փոխարեն իր որդու Նարեկ Լուիս Ռենդոնի կացության կարգավիճակը հավաստող փաստաթղթերը ստանալու նպատակով, նշված հանգամանքը դատարանը հաստատված է համարում՝ հաշվի առնելով նաև գործի քննության ընթացքում հայցվորի ներկայացուցչի

կողմից դատարանի պահանջով ներկայացված Թագուհի Օհնիկյանի կողմից տրված, նոտարական կարգով վավերացված գրավոր հայտարարությունը:
Դատարանը հաստատված է համարում, որ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը չի կատարել Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի մոր՝ օրինական ներկայացուցիչ Թագուհի Օհնիկյանի ներկայացուցիչ Հասմիկ Օհնիկյանի կողմից ներկայացված դիմումով խնդրարկված գործողությունը՝ դրսևորել է անգործություն, որի մասին Հասմիկ Օհնիկյանին հայտնել է 31.01.2011թ. թիվ 25/01-3725 գրությամբ, որով պատճառաբանելով, որ Իսպանիայի քաղաքացի, 19.02.2008թ. ծնված Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի մոր՝ օրինական ներկայացուցիչ Թագուհի Օհնիկյանի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթն եզրափակված է և Հասմիկ Օհնիկյանը վարույթի մասնակից, ինչպես նաև վարույթի ընթացքում որպես մասնակցի ներկայացուցիչ չի հանդիսացել, հայտնել է որ դիմումով ներկայացված պահանջն իրավաչափ չէ և վերջինիս ներկայացված լիազորագրով չի կարող տրամադրվել Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթը:
Դատարանի գնահատմամբ նշված վեճը լուծելու համար անհրաժեշտ է պարզել, թե արդյոք վարչական վարույթի մասնակից հանդիսացող անգործունակ անձի օրինական ներկայացուցիչն իր հերթին կարող է հանդես գալ ներկայացուցչի միջոցով, թե ոչ, ինչպես նաև իրականցված վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտը կարող է արդյոք հանձնվել վարույթի ընթացքում որպես մասնակցի ներկայացուցիչ հանդես չեկած անձին, թե ոչ:
Վերոշարադրված «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը վարույթի մասնակիցներին հնարավորություն է ընձեռնում վարույթում հանդես գալ նաև իրենց ներկայացուցիչների միջոցով, ընդ որում վարույթի մասնակցի ներկայացուցիչ են համարվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով լիազորված անձինք, այսինքն վարչական վարույթի ընթացքում ներկայացուցչության նկատմամբ տարածելի են ՀՀ քաղաքացիական օրենսգքրի նշված իրավահարաբերությունը կարգավորող նորմերը:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի համաձայն մեկ անձի (ներկայացուցչի) կողմից ուրիշ անձի (ներկայացվողի) անունից լիազորագրի, օրենքի կամ դրա համար լիազորված պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում է անմիջականորեն ներկայացվողի համար:
Նույն օրենսգրքի 321-րդ հոդվածի համաձայն լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ հոդվածի համաձայն տասնչորս տարեկան չդարձած անչափահասների (փոքրահասակների) փոխարեն գործարքները, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ կետում նշվածների, նրանց անունից կարող են կնքել միայն նրանց ծնողները, որդեգրողները կամ խնամակալները: Նույն հոդվածի 2-րդ կետը նախատեսում է վեցից մինչև տասնչորս տարեկան փոքրահասակների կողմից ինքնուրույն գործարքներ կնքելու իրավունքի դեպքերը, իսկ 3-րդ կետի համաձայն փոքրահասակի գործարքներով՝ ներառյալ նրա կողմից ինքնուրույն կնքված գործարքները, գույքային պատասխանատվություն են կրում նրա ծնողները, որդեգրողները կամ խնամակալը, եթե չապացուցեն, որ պարտավորությունն իրենց մեղքով չի խախտվել: Այդ անձինք, օրենքին համապատասխան, պատասխանատվություն են կրում նաև փոքրահասակի պատճառած վնասի համար:
Նշված հոդվածում զետեղված իրավանորմի վերլուծությունից բխում

	է, որ մինչև 6 տարեկան փոքրահասակ երեխաները անգործունակ են և նրանց քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կրողները դրանց ամբողջ ծավալով նրանց օրինական ներկայացուցիչներն են՝ ծնողները, որդեգրողները, խնամակալները: Վերոգրյալ իրավանորմի և դրա մեկնաբանությունից ելնելով, դատարանը գտնում է, որ փոքրահասակ երեխայի օրինական ներկայացուցիչը, կրելով իր երեխայի քաղաքացիական իրավունքներն ու պարտականություններն ամբողջ ծավալով, նաև ունի ներկայացուցչության գործարք կնքելու իրավունք, այսինքն օրենքով սահմանված կարգով տրված լիազորագրի հիման վրա ներկայացուցչի միջոցով ներկայացվելու իրավունք, քանի որ հակառակ պարագայում կսահմանափակվի փոքրահասակի իրավունքն իր օրինական ներկայացուցչի միջոցով ներկայացուցչության գործարք կնքելու և ինչու ոչ տվյալ դեպքում վարչական մարմինների հետ հարաբերություններում համապատասխան իրավական գիտելիքներ ունեցող ներկայացուցչի միջոցով հանդես գալու տեսանկյունից: Ելնելով վերոգրյալ պատճառաբանությունից դատարանը գտավ, որ վարչական վարույթի անգործունակ մասնակցի օրինական ներկայացուցիչը, վարչական մարմնի հետ փոխհարաբերություններում իրավունք ունի իր հերթին հանդես գալու ներկայացուցչի միջոցով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի համաձայն գրավոր վարչական ակտն ընդունված է համարվում այդ ակտը վարչական մարմնի իրավասու պաշտոնատար անձի կողմից ստորագրվելու օրվանից, իսկ 59-րդ հոդվածի համաձայն վարչական մարմինը վարույթի մասնակիցներին վարչական ակտի ընդունման մասին իրազեկում է սույն հոդվածով նախատեսված հանձնման կամ հրապարակման եղանակով, գրավոր վարչական ակտը, ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին, դա կարող է իրականացվել պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, հասցեատիրոջը ստորագրությամբ առձեռն հանձնելու, ինչպես նաև՝ օրենքով սահմանված այլ եղանակներով: Վերոգրյալ իրավանորմերից հետևում է, որ գրավոր վարչական ակտն ընդունելուց հետո, այն եռօրյա ժամկետում պետք է հանձնվի (դրա ընդունման մասին պետք է իրազեկվի) վարույթի մասնակցին (վարույթի մասնակիցը): Տվյալ դեպքում, դատարանն արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով, հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերով նախատեսված չէ որևէ սահմանափակում այն մասին, որ անձը, որը մասնակցել է վարչական վարույթին զրկված է վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտին իր ներկայացուցչի (նաև վարչական վարույթին չներգրավված ներկայացուցչի) միջոցով իրազեկվելու, այդ թվում նաև ներկայացուցչի միջոցով իր համար բարենպաստ կամ միջամտող վարչական ակտը ստանալու իրավունքից: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր: Ելնելով վերոգրյալ իրավանորմերից, հաստատված հանգամանքներից, եզրահանգումներից և պատճառաբանություններից դատարանը գտավ, որ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում Իսպանիայի քաղաքացի, 19.02.2008թ. ծնված Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյան մոր՝ օրինական ներկայացուցիչ Թագուհի Օհնիկյանի դիմումի հիման վրա հարուցված և դիմումով

	խնդրարկված բարենպաստ վաչական ակտի ընդունմամբ ավարտված վարչական վարույթի ավարտից հետո, վարույթի անգործունակ մասնակից Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի օրինական ներկայացուցիչ Թագուհի Օհնիկյանը իրավաչափորեն իրացնելով իր՝ որպես իր փոքրահասակ որդու օրինական ներկայացուցչի իրավունքները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով՝ հասարակ գրավոր ձևով 30.11.2010թ. Հասմիկ Օհնիկյանի անվամբ տվել է լիազորագիր իր անունից հանդես գալու ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում՝ այդ թվում իր փոխարեն իր որդու Նարեկ Լուիս Ռենդոնի կացության կարգավիճակը հավաստող փաստաթղթերը ստանալու նպատակով, իսկ Հասմիկ Օհնիկյանը, իր անվամբ Թագուհի Օհնիկյանի կողմից 30.11.2010թ. հասարակ գրավոր ձևով տրված լիազորագրի հիման վրա, որպես վարչական վարույթի մասնակցի օրինական ներկայացուցչի ներկայացուցիչ, լիազորագրի հիման վրա, ներկայացվողի անունից, 12.01.2011թ. դիմում է ներկայացրել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն՝ ընդունված վարչական ակտը՝ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամանակավոր կացության ակտի ձևով ձևակերպված Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը, ստանալու՝ գործողություն կատարելու, իրավաչափ խնդրանքով, որպիսի խնդրանքը վարչական մարմնի կողմից ոչ իրավաչափորեն մերժվել է՝ խնդրարկված գործողությունը չի կատարվել, ցուցաբերվել է անգործություն: Դատարանը գտնում է, որ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից վարույթի մասնակից անգործունակ Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի օրինական ներկայացուցիչ Թագուհի Օհնիկյանի ներկայացուցչի դիմումի հիման վրա անգործություն ցուցաբերելը՝ ընդունված վարչական ակտը՝ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամանակավոր կացության ակտի ձևով ձևակերպված Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը չտրամադրելն իրավաչափ չէ և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 59-րդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ, 318-րդ և 321-րդ հոդվածների սխալ մեկնաբանման արդյունք է: Դատարանն արձանագրում է, որ օտարերկրացիներին Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրելու հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը, մասնավորապես հայցադիմումի պատասխանում և գործի քննության ընթացքում պատասխանողի ներկայացուցչի կողմից վկայակոչված «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 07.02.2008թ. N 134-Ն որոշումը, որևէ կերպ չի սահմանափակում օտարերկրացու՝ իր անվամբ տրված Հայաստանի Հանրապետությունում ժամանակվոր կացության քարտը, ներկայացուցչի միջոցով ստանալու իրավունքը: Ելնելով վերոգրյալ իրավանորմերից, հաստատված փաստական հանգամանքներից, պատճառաբանություններից և եզրահանգումներից դատարանը գտավ, որ Հասմիկ Օհնիկյանի հայցն ընդդեմ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին պետք է բավարարել ու ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը պարտավորեցնել Հասմիկ Օհնիկյանին, որպես

Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի օրինական ներկայացուցիչ Թագուհի Օհնիկյանի ներկայացուցչի՝ գործող 30.11.2010թ. հասարակ գրավոր ձևով տրված լիազորագրի հիման վրա, տրամադրելու Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը՝ ժամանակվոր կացության քարտը:
Անդրադառնալով դատական ծախսերի՝ կողմերի միջև բաշխման հարցին դատարանը արձանագրում է, որ հայցադիմումում և հայցադիմումի լրացմամբ հայցվորը (ներկայացուցիչը) դատական ծախսերի կազմի մեջ ներառել է և խնդրել է վճռով լուծել նաև ներկայացուցչի ողջամիտ վարձատրությունը՝ 170,000 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև Իսպանիայում Թագուհի Օհնիկյանի կողմից տրված հայտարարությունը նոտարական կարգով վավերացնելու համար կատարված ծախսը՝ 43.15 եվրոյին համարժեք ՀՀ դրամի չափով:
Դատարանը, անդրադառնալով երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցչի կողմից ներկայացված, դատական ծախսերի բաշխման՝ ներկայացուցչին վճարված վարձատրության չափի մասով ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի մատնանշմամբ թիվ ՎԴ/1547/05/10 վարչական գործով կայացրած վճռի հիմնավորումներին, գտավ, որ դատական գործի, վեճի ծավալները և բարդությունը գործերը միևնույն փաստական հանգամանքների շարքին չեն կարող դասվել, յուրաքանչյուր վեճ ունի իր ուրույն, միայն տվյալ գործին բնորոշ ծավալներ ու բարդության աստիճան, ուստի նման պատճառաբանությամբ թիվ ՎԴ/1547/05/10 վարչական գործով կայացրած վճռի հիմնավորումները կիրառելի չեն:
Որպես ներկայացուցչին վարձատրության համար վճարման ենթակա գումարի հիմնավորում հայցադիմումին կից, ինչպես նաև դատարանի պահանջով ներկայացվել են 04.02.2011թ. Հասմիկ Օհնիկյանի և «Այլեքս» ՍՊ ընկերության միջև կնքված ծառայությունների վճարովի մատուցման թիվ 040211 պայմանագիրը (պատճենը)՝ պայմանագրի գինը՝ 170,000 ՀՀ դրամ և «Այլեքս» ՍՊ ընկերության ու փաստաբան Ա.Խաչատրյանի միջև 10.02.2011թ. կնքված ծառայությունների մատուցման պատվիրակման թիվ 040212 պայմանագիրը՝ պայմանագրի գինը՝ 140,000 ՀՀ դրամ:
ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:
ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսեր են ֆիզիկական կամ իրավաբանական անձի ներկայացուցիչներին վճարվելիք գումարները:
ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի կողմից վկաներին և փորձագետներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Եթե պատասխանող է հանդիսացել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, ապա դատական ծախսերը դրվում են Հյաստանի Հանրապետության կամ համապատասխան համայնքի վրա:
Ներկայացուցիչներին վճարվող գումարների գծով դատական ծախսի փոխհատուցումը դրվում է համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կամ համայնքի վրա, եթե գործը լուծվել է ի վնաս իրենց, փոխհատուցման չափը որոշելիս դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափերը:

Դատարանը, նկատի ունենալով, որ Հասմիկ Օհնիկյանի հայցը՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին ենթակա է բավարարման, գտնում է, որ փոխհատուցման ենթակա են հայցվորի պահանջի այդ մասով կրած և կրման ենթակա դատական ծախսերն անհրաժեշտ ծավալով:
Միաժամանակ, դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով փոխհատուցման ենթական են կողմի կրած դատական ծախսերն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, այսինքն՝ փոխհատուցման ենթակա են ներկայացուցիչներին վճարվելիք ոչ թե կամայական կամ կողմերի որոշած գումարները, այլ այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Նշված վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն գործով խախտված իրավունքի վերականգնման համար ներկայացուցչի կողմից ներկայացուցչություն իրականացնելու ուղղությամբ կատարված գործառույթները և հաշվի առնելով գործի բարդությունն իրականացված գործառույթների հետ համակցության մեջ՝ պետք է եզրահանգել, որ տվյալ դեպքում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ծախսերի՝ ներկայացուցչին վճարվելիք գումարի, ողջամիտ չափը կարող է կազմել 50000 ՀՀ դրամ: Վերոգրյալ պատճառաբանությունից ելնելով, դատարանը գտնում է, որ ներկայացուցչին վճարման ենթակա (վճարված) գումարի տեսքով դատական ծախսը պետք է փոխհատուցվի 50000 ՀՀ դրամի չափով:
Դատարանը գտնում է նաև, որ հայցվորին ենթակա է փոխահատուցման Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասով հայցադիմում դատարան ներկայացնելու համար նախապես վաճարված պետական տուրքի գումարը՝ 4000 ՀՀ դրամը, իսկ Հասմիկ Օհնիկյանի՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ 25/01-4725 գրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասով դատական ծախսի հարցը պետք է համարել լուծված:
Դատարանը, անդրադառնալով հայցվորի ներկայացուցչի կողմից Իսպանիայում Թագուհի Օհնիկյանի կողմից տրված հայտարարությունը նոտարական կարգով վավերացնելու համար կատարված ծախսը՝ 43.15 եվրոյին համարժեք ՀՀ դրամի չափով դատական ծախսերի կազմի մեջ ներառելու պահանջին, հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի վերոշարադրյալ դրույթները, գտնում է, որ նշված ծախսը չի կարող ներառվել սույն վարչական գործով դատական ծախսերի կազմի մեջ, նկատի ունենալով, որ դատարանին որևէ ապացույց չներկայացվեց, որ նշված ծախսը կատարվել է հայցվորի՝ Հասմիկ Օհնիկյանի կողմից:
Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 112-115-րդ, 117.2-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով, դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

Ըստ հայցի Հասմիկ Օհնիկյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, երրորդ անձ ՀՀ

	ֆինանսների նախարարության՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ 25/01-4725 գրությունն անվավեր ճանաչելու պահանջների մասին թիվ ՎԴ/0585/05/11 վարչական գործի վարույթը ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ 25/01-4725 գրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասով կարճել՝ այդ մասով վեճը վարչական դատարանին ընդդատյա չլինելու հիմքով: Հասմիկ Օհնիկյանի հայցն ընդդեմ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին՝ բավարարել: ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը պարտավորեցնել Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի օրինական ներկայացուցիչ Թագուհի Օհնիկյանի ներկայացուցիչ Հասմիկ Օհնիկյանին՝ գործող 30.11.2010թ. հասարակ գրավոր ձևով տրված լիազորագրի հիման վրա, տրամադրելու Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը՝ ժամանակավոր կացության քարտը: Հայաստանի Հանրապետությունից հօգուտ Հասմիկ Օհնիկյանի բռնագանձել 50000 ՀՀ դրամ՝ որպես ներկայացուցչին վճարվող գումար և 4000 ՀՀ դրամ՝ որպես դատարան հայցադիմում ներկայացնելու համար նախապես վճարված պետական տուրքի գումարի փոխհատուցում: Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո: Վճիռը կարող է վերաքննության կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարան մինչև դրա օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը: Վճիռը կամովին չկատարելու դեպքում, դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին: ԴԱՏԱՎՈՐ Ա.ԲԱԲԱՅԱՆ
Դատական ակտի ամսաթիվը:	28-10-2011
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. (ՀՀ դրամ):	0
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	02-12-2011
էջերի քանակը:	144
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	02-12-2011
էջերի քանակը:	144

Գործին կից նյութերը:	
Որ դատարան է ուղարկվել:	Վարչական վերաքննիչ
Ուր է ուղարկվել:	
Ելքի գրության համար:	ԴԴ9-Ե-88850/11

Ամսաթիվ:	05-12-2011

Ամսաթիվ:	12-11-2012
Այլ նշումներ:	

Ամսաթիվ:	19-10-2012
Այլ նշումներ:	

Տրվել է կատարողական թերթ:	15-11-2012
Հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. տուրքի չափը (ՀՀ դրամ):	20000
Կատարողական թերթերի քանակ:	1
Այլ նշումներ:	

Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	23-01-2013
էջերի քանակը:	1 հատ. 144 թերթ, 2 հատ. 157 թերթ:
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	

Ամսաթիվ:	24-01-2013
էջերի քանակը:	հատոր 1 բաղկացած 144 թերթից
էջերի քանակը:	հատոր 2 բաղկացած 157 թերթից
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	

Դատական Գործ N: ՎԴ/0585/05/11

Բողոքի ստացման ամսաթիվ:	25-11-2011
Բողոք բերող անձը	
Անուն:	ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն
Հասցե:	Մաշտոցի 13ա
Ում կողմից է բերվել բողոքը:	Պատասխանող
Պետական տուրք:	10000

Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Պատասխան բերող անձը	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Բողոքարկվող դատական ակտը:	ըստ հայցի Հասմիկ Օնիկյանի (անձնագիր AF 0485815, տրված 06.06.2002թ. 004-ի կողմից) ընդդեմ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ 25/01-4725 գրությունն անվավեր ճանաչելու պահանջների մասին
Գործի համարը:	ՎԴ/0585/05/11
Ամսաթիվ:	05-12-2011
Վիճակագրական տողի համարը:	2.1
Գործի համարը:	ՎԴ/0585/05/11
Գործը բաղկացած է (հատոր / էջերի քանակ):	144
Գործը ստացվել է:	Վարչական
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	06-12-2011
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Վարչական վերաքննիչ
Դատավորի անուն:	Լարիսա Սոսյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Վարչական վերաքննիչ
Դատավորի անուն:	Աշոտ Սարգսյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Վարչական վերաքննիչ
Դատավորի անուն:	Հովսեփ Բեդևյան
Այլ նշումներ:	
Որոշման ամսաթիվ:	09-12-2011
Ժամկետ:	
Որոշման հիմքը	
Հոդված	ՀՀ Վարչ. դատ. օր. 117.4-րդ, 117.6-րդ և ՀՀ քաղ. դատ. օր-ի 144-րդ հոդվածներ
Որոշման բովանդակություն:	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ Հայաստանի Հանրապետության Վարչական գործ թիվ ՎԴ/0585/05/11 վարչական դատարանի վճիռ Վարչական գործ թիվ ՎԴ/0585/05/11

Նախագահող դատավոր՝ ԱՐԱ ԲԱԲԱՅԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

09 դեկտեմբերի 2011 թվական ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) հետևյալ կազմով՝
նախագահող դատավոր ԼԱՐԻՍԱ ՍՈՍՅԱՆ,
դատավոր ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ,
դատավոր ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ,

քննարկելով ըստ հայցի Հասմիկ Օհնիկյանի ընդդեմ Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, երրորդ անձ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու, Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ 25/01-4725 գրությունն անվավեր ճանաչելու պահանջների մասին, թիվ ՎԴ/0585/05/11 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 28-ի վճռի դեմ Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության բերած վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը 2011 թվականի հոկտեմբերի 28-ի վճռով թիվ ՎԴ/0585/05/11 վարչական գործի վարույթը՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ 25/01-4725 գրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասով, կարճել է, իսկ Հասմիկ Օհնիկյանի հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագային և վիզաների վարչության, երրորդ անձ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասով, բավարարել է:
Նշված վճռի դեմ Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը 2011 թվականի նոյեմբերի 25-ին բերել է վերաքննիչ բողոք, խնդրելով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի թիվ ՎԴ/0585/05/11 վարչական գործով 2011 թվականի հոկտեմբերի 28-ին կայացրած վճիռը ամբողջությամբ բեկանել, փոփոխել այն և հայցը մերժել:
Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքը ենթակա է վերադարձման, հետևյալ պատճառաբանությամբ՝
Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 117.6-րդ 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե՝ չեն պահպանվել սույն օրենսգրքի 117.4-րդ հոդվածի պահանջները:
Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսրքի 117.4-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, բողոքի պատճենները՝ դատական ակտ կայացրած դատարանին և գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու մասին ապացույցները:
Տվյալ դեպքում բողոքին կցված չեն բողոքի պատճենները՝ դատական ակտ կայացրած դատարանին և գործին մասնակցող այլ

անձանց ուղարկելու մասին ապացույցները:
Սույն գործով հայցի առարկան են կազմել մեկից ավելի ոչ գույքային պահանջներ: Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը 2011 թվականի հոկտեմբերի 28-ի վճռով թիվ ՎԴ/0585/05/11 վարչական գործի վարույթը՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ 25/01-4725 գրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասով, կարճել է, իսկ՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասով, բավարարել:
Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը վերաքննիչ բողոքին կցելով 10.000 դրամի չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ, խնդրել է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի թիվ ՎԴ/0585/05/11 վարչական գործով 2011 թվականի հոկտեմբերի 28-ին կայացրած վճիռը ամբողջությամբ բեկանել, փոփոխել այն և հայցը մերժել:
«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ մասի «բ» ենթակետի համաձայն՝ ոչ գույքային բնույթի պահանջի գործերով պետական տուրքը գանձվում է բազային տուրքի տասնապատիկի չափով:
Նշված իրավական նորմից հետևում է, որ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար գանձվող պետական տուրքի չափը որոշվում է ըստ բողոքարկվող գործի հայցի առարկան կազմող պահանջների բնույթի և քանակի: Հետևաբար, եթե բողոք բերած անձի վերաքննիչ բողոքը ներկայացվել է այնպիսի գործով, որի հայցի առարկան են կազմել մեկից ավելի ոչ գույքային պահանջներ, ապա վերջինս յուրաքանչյուր պահանջով պարտավոր է վճարել պետական տուրքը սահմանված չափով:
Տվյալ դեպքում բողոքարկվել է դատական ակտն ամբողջությամբ, սակայն, պետական տուրքը վճարվել է միայն մեկ ոչ գույքային պահանջի համար:
Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքում չեն պահպանվել Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 117.4-րդ հոդվածի պահանջները: Հետևաբար, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 117.6-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով վերաքննիչ բողոքը ենթակա է վերադարձման:
Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 117.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին« 2-րդ կամ 3-րդ կետերով նախատեսված հիմքերով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացվելու և որոշումն ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում« կրկին ներկայացվելու դեպքում բողոքը համարվում է դատարանում ընդունված սկզբնական ներկայացման օրը: Բողոքը կրկին ներկայացվելու դեպքում խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում:
Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 117.4-րդ, 117.6-րդ և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ ՎԴ/0585/05/11 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 28-ի վճռի դեմ Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից

	բերված վերաքննիչ բողոքը վերադարձնել: 2. Բողոքում թույլ տրված խախտումները վերացվելու և որոշումն ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, կրկին ներկայացվելու դեպքում բողոքը համարվում է դատարանում ընդունված սկզբնական ներկայացման օրը: 3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ որոշումը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում: ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ ԴԱՏԱՎՈՐ ԴԱՏԱՎՈՐ Լ. ՍՈՍՅԱՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
Այլ նշումներ:	
Բողոքի ստացման ամսաթիվը:	27-12-2011
Երբ:	29-12-2011
Որոշումը ուղարկվել է կողմերին:	29-12-2011
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	29-12-2011
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	22-02-2012
Ծանուցագիրը ուղարկվել է:	
Ժամ:	11:15
Նիստերի դահլիճի համարը:	11
Այլ:	
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Ամսաթիվ:	14-03-2012
Ծանուցագիրը ուղարկվել է:	
Ժամ:	10:45
Նիստերի դահլիճի համարը:	11
Այլ:	Որոշման հրապարակում
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Ամսաթիվ:	14-03-2012
Անփոփոխ թողնված դատական ակտ:	Պատճառաբանվել է
Այլ նշումներ:	
Դատական ակտ:	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ Հայաստանի Հանրապետության Վարչական գործ թիվ

ՎԴ/0585/05/11
վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԴ/0585/05/11
Նախագահող դատավոր՝ ԱՐԱ ԲԱԲԱՅԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

14 մարտի 2012 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող դատավոր՝ ԼԱՐԻՍԱ ՍՈՍՅԱՆ
դատավոր՝ ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ
դատավոր՝ ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ

մասնակցությամբ՝
բողոք բերած անձ, գործով պատասխանող Հայաստանի Հանրապետության
ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության,
ի դեմս ներկայացուցիչ Արմեն Սարգսյանի,

դռնբաց դատական նիստում քննելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության (այսուհետ՝ Վարչություն) կողմից բերված վերաքննիչ բողոքը Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (այսուհետ՝ Վարչական դատարան) 2011 թվականի հոկտեմբերի 28-ի վճռի դեմ, որը կայացվել է թիվ ՎԴ/0585/05/11 վարչական գործով՝ ըստ հայցի Հասմիկ Օհնիկյանի ընդդեմ Վարչության, երրորդ անձ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն)՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի՝ Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու, Վարչության թիվ 25/01-4725 գրությունն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի դատավարական նախապատմությունը
Հայցվոր Հասմիկ Օհնիկյանը դիմելով Վարչական դատարան, խնդրել է Վարչությանը պարտավորեցնել իրեն տրամադրել Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը, ինչպես նաև խնդրել է դատական ծախսերին անդրադառնալիս ծախսերի մեջ ներառել նաև ներկայացուցչի ողջամիտ վարձատրությունը՝ 170.000 դրամի չափով:
Վարչական դատարանի 2011 թվականի մարտի 4-ի որոշմամբ Հասմիկ Օհնիկյանի հայցադիմումն ընդունվել է վարույթ:
2011 թվականի հուլիսի 13-ին ներկայացված հայցադիմումի լրացումով հայցվորի ներկայացուցիչը խնդրել է նաև ոչ իրավաչափ ճանաչել Վարչության 25/01-4725 գրությունը:
Վարչական դատարանը 2011 թվականի հոկտեմբերի 28-ի վճռով կարճել է թիվ ՎԴ/0585/05/11 վարչական գործի վարույթը՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ 25/01-4725 գրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասով, իսկ մնացած մասով հայցը բավարարել է:
Նշված վճռի դեմ Վարչությունը 2011 թվականի նոյեմբերի 25-ին բերել է վերաքննիչ բողոք՝ խնդրելով Վարչական դատարանի թիվ

ՎԴ/0585/05/11 վարչական գործով 2011 թվականի հոկտեմբերի 28-ին կայացրած վճիռն ամբողջությամբ բեկանել, փոփոխել այն և հայցը մերժել:
Վերաքննիչ դատարանը 2011 թվականի դեկտեմբերի 29-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ:
Հասմիկ Հակոբի Օհնիկյանի ներկայացուցչի կողմից 2012 թվականի հունվարի 25-ին ներկայացվել է վերաքննիչ բողոքի պատասխան:

2. Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը
Բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.
1. Դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ, 318-րդ և 321-րդ հոդվածների 1-ին մասերը:
2. Դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածը, 294-րդ հոդվածի 1-ին մասը, 296-րդ, 297-րդ և 299-րդ հոդվածները, 300-րդ հոդվածի 1-ին մասը, 305-րդ հոդվածը, 321-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, 323-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, որոնք պետք է կիրառեր:
3. Դատարանը չի կիրառել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասը, 43-րդ հոդվածի 1-ին մասը և 52-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր:
4. Դատարանը չի կիրառել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել և կիրառել 86-րդ հոդվածի 1-ին մասը:
5. Դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 58-րդ և 59-րդ հոդվածները:
6. Դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը, 15-րդ հոդվածը, չի կիրառել 3-րդ հոդվածը, 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 14-րդ հոդվածի 1-ին մասը, 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, որոնք պետք է կիրառեր:
7. Դատարանը չի կիրառել «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 57-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր:
8. Դատարանը չի կիրառել ՀՀ կառավարության 07.02.2008թ. թիվ 134-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետը, նույն որոշման «Ժամանակավոր կացության քարտի և մշտական կացության քարտի նկարագիրը և ձևը» հավելվածի 1- 3-րդ կետերի դրույթները, որոնք պետք է կիրառեր:
9. Դատարանը չի կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը և 39-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր:
10. Դատարանը հայցվոր Հ.Օհնիկյանի պարագայում սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները:
11. Դատարանը չի կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 4-րդ մասը, 21-րդ հոդվածի 1-ին մասը, 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերը, որոնք պետք է կիրառեր:
12. Դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածը, 41-րդ հոդվածի 1-ին մասը, 43-րդ հոդվածի 1-ին մասը, որոնք պետք է կիրառեր:
13. Դատարանը Թ.Օհնիկյանի կողմից Հ.Օհնիկյանի անվամբ հասարակ գրավոր ձևով 30.11.2010թ. տրված լիազորագրի (լիազորագրի 3-րդ և 4-րդ կետերով վերապահված լիազորություններ) անվավերության առումով չի կիրառել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին պարբերությունը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածը:
Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

28.10.2011թ. դատարանը վճռել է թիվ ՎԴ/0585/05/11 վարչական գործով ըստ հայցի՝ Հասմիկ Օհնիկյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ 25/01-4725 գրությունն անվավեր ճանաչելու պահանջների մասին թիվ ՎԴ/0585/05/11 վարչական գործի վարույթը ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ 25/01-4725 գրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասով կարճել՝ այդ մասով վեճը վարչական դատարանին ընդդատյա չլինելու հիմքով:
Հասմիկ Օհնիկյանի հայցն ընդդեմ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին՝ բավարարել:
ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը պարտավորեցնել Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի օրինական ներկայացուցիչ Թագուհի Օհնիկյանի ներկայացուցիչ Հասմիկ Օհնիկյանին՝ գործող 30.11.2010թ. հասարակ գրավոր ձևով տրված լիազորագրի հիման վրա, տրամադրելու Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը՝ ժամանակավոր կացության քարտը:
Հայաստանի Հանրապետությունից հօգուտ Հասմիկ Օհնիկյանի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես ներկայացուցչին վճարվող գումար և 4000 ՀՀ դրամ՝ որպես դատարան հայցադիմում ներկայացնելու համար նախապես վճարված պետական տուրքի գումարի փոխհատուցում:
Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը
1/ Հայցվոր Հասմիկ Օհնիկյանի կողմից ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն հասցեագրված 12.01.2011թ. դիմումում, հղում կատարելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածին, իրեն լիազորողի՝ Թագուհի Օհնիկյանի կողմից իր անվամբ, առանց նոտարական վավերացման, նշված Օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերության ուժով, հասարակ գրավոր ձևով 30.11.2010թ. տրված լիազորագրով լիազորողի փոքրահասակ որդու՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի՝ (ծնված 19.02.2008թ.) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթն իրեն տրամադրելու պահանջի իրավաչափությունը, այն պարագայում, երբ Հ.Օհնիկյանը չի համարվել վարչական վարույթի մասնակից (դատարանը նշված հանգամանքը նույնպես հաստատված է համարել 28.10.2011թ. վճռով, և վերջինիս կողմից ՀՀ ոստիկանության ԱՎ վարչություն 12.01.2011թ. ներկայացված դիմումն էլ դատարանը չի համարել վարչական վարույթի հարուցման հիմք):
2/ Հայցվոր Հասմիկ Օհնիկյանի 12.01.2011թ. դիմումի և դիմումին կից ներկայացված, Թագուհի Օհնիկյանի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի կարգով Հ.Օհնիկյանի անվամբ առանց նոտարական վավերացման, հասարակ գրավոր ձևով 30.11.2010թ. տրված լիազորագրով վարչական վարույթից դուրս հանդես գալու և լիազորողի փոքրահասակ որդու՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի՝ (ծնված 19.02.2008թ.)

Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը՝ քարտն իրեն տրամադրելու պահանջը վարչական մարմնի կողմից մերժելու պարագայում արդյոք իրականում խախտվել կամ անմիջականորեն կարող էին խախտվել Հասմիկ Օհնիկյանի՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքներն ու ազատությունները, ինչպիսին որ հաստատված է համարել դատարանը 28.10.2011թ. վճռով,
3/ ՀՀ վարչական դատարանը յուրովի է մեկնաբանել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերի պահանջները՝ Հ.Օհնիկյանի 28.02.2011թ. հայցադիմումը վարույթ ընդունելով ու հետագայում նաև՝ բավարարելով հայցը, այն պարագայում, երբ Թագուհի Օհնիկյանի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի կարգով Հասմիկ Օհնիկյանի անվամբ հասարակ գրավոր ձևով 30.11.2010թ. տրված լիազորագրով վերջինս չի լիազորվել Թ.Օհնիկյանին ներկայացնել կամ նրա անունից հանդես գալ ՀՀ դատական ատյաններում, այդ թվում՝ ՀՀ վարչական դատարանում, որպիսի հանգամանքը հաստատվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասերի պահանջներով չպայմանավորված, հասարակ գրավոր ձևով 30.11.2010թ. տրված միակ լիազորագրով, և Հ.Օհնիկյանն իրավունք ուներ արդյոք իբրև թե իր ենթադրյալ խախտված իրավունքները վերականգնելու նպատակով ոչ որպես Թագուհի Օհնիկյանի լիազորված անձ կամ ներկայացուցիչ, այլ սեփական նախաձեռնությամբ և որպես դատավարության ինքնուրույն մասնակից՝ հայցվոր, հայցադիմում ներկայացնել ՀՀ վարչական դատարան, այն դեպքում, երբ նշված լիազորագրով վերջինս կարող էր հանդես գալ միայն վարչական վարույթի ընթացքում, մինչդեռ վարչական վարույթ որպես այդպիսին չի եղել, իսկ լիազորագրում առկա լիազորություններով Թ.Օհնիկյանը Հ.Օհնիկյանին լիազորել է միայն իր անունից հանդես գալ, իրեն ներկայացնել ԱՎ վարչությունում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, իր անունից ստորագրել, հանձնել, իր փոխարեն ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր:
4/ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված՝ «Լիազորագրի համար նոտարական վավերացում չի պահանջվում» դրույթի՝ կոնկրետ սույն վարչական գործի քննության, ինչպես նաև վարչական գործով մինչդատական վարույթի նկատմամբ կիրառելի, թույլատրելի և վերաբերելի լինելու իրավաչափությունը՝ ՀՀ գործող օրենսդրության պահանջների համապատասխանության տեսանկյունից, այն պարագայում, երբ նշված Օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ ամրագրված դրույթը վերաբերվում է միայն վարչական վարույթի ընթացքում առանց նոտարական վավերացման, հասարակ գրավոր ձևով տրված լիազորագրով հանդես գալուն, մինչդեռ, դատարանը, որպես վարչական վարույթի հարուցման հիմք չի դիտել Հ.Օհնիկյանի 12.01.2011թ. դիմումը և դրանից բխող գործողությունները, և Հ.Օհնիկյանն էլ չի համարվել Թ.Օհնիկյանի 22.11.2010թ. դիմումի հիման վրա հարուցված և 23.11.2010թ. վարչական ակտի ընդունմամբ եզրափակված վարչական վարույթի մասնակից, ոչ էլ վարչական վարույթում որպես մասնակցի ներկայացուցիչ:
5/ Վարչական վարույթի սահմաններից դուրս, առանց նոտարական վավերացման, հասարակ գրավոր ձևով տրված լիազորագրով ՀՀ քաղաքացու կողմից հանդես գալու և վարչական մարմնից՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից, իրեն լիազորող ՀՀ քաղաքացու Իսպանիայի քաղաքացի (օտարերկրացի) հանդիսացող փոքրահասակ որդու՝ ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ հաստատող քարտը պահանջելու և

	ստանալու իրավաչափությունը, այն պարագայում, երբ նշված քարտը ՀՀ-ում օտարերկրացու ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող հիմնական պաշտոնական իրավաստեղծ փաստաթուղթն է (օտարերկրացուն ՀՀ-ում բնակվելու, ՀՀ մուտքի և ՀՀ-ից ելքի իրավունք վերապահող), ինչպես նաև իրավական հետևանքներ առաջացնող, որը ՀՀ կառավարության 07 փետրվարի 2008թ. թիվ 134-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի համաձայն, տրվում է օտարերկրացուն: 6/ Վարչական վարույթի ընթացակարգով չպայմանավորված, առանց նոտարական վավերացման, հասարակ գրավոր ձևով տրված լիազորագրով Իսպանիայի քաղաքացի հանդիսացող փոքրահասակի՝ Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի (ծնված 19.02.2008թ.) ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող քարտը լիազորված անձին տրամադրելու իրավաչափությունը՝ վարչական մարմնի կողմից փոքրահասակ օտարերկրացու ծնողների գտնվելու վայրի մասին տեղեկությունների բացակայության պայմաններում՝ բացառապես տվյալ իրավահարաբերությունների ոլորտը կարգավորող, միջազգայնորեն հանրաճանաչ իրավական նորմերով ընդունված՝ երեխայի շահերի և իրավունքների առավելագույնս ապահովելու նկատառումներով վարչական մարմնի կողմից անգործություն դրսևորելու տեսանկյունից: 8/ Դատաքննության նախապատրաստական փուլում պատասխանողի ներկայացուցչի կողմից 16.05.2011թ. միջնորդություն է հարուցվել նշանակել դատաձեռագրաբանական փորձաքննություն՝ Թագուհի Օհնիկյանի կողմից 22.11.2010թ. ՀՀ ոստիկանության ԱՎ վարչություն ներկայացրած դիմումում (այդ դիմումը վարչական վարույթի հարուցման միակ հիմքն է հանդիսացել) և Թ.Օհնիկյանի կողմից Հ. Օհնիկյանի անվամբ առանց նոտարական վավերացման, հասարակ գրավոր ձևով 30.11.2010թ. տրված լիազորագրում լիազորող Թագուհի Օհնիկյանի անվան դիմաց կատարված ստորագրություններում առկա ակնհայտ տեսանելի անհամապատասխանությունների՝ դրանց հավաստիության և արժանահավատության պարզաբանման նպատակով, մինչդեռ 16.05.2011թ. հարուցված միջնորդությունը դատարանը շուրջ 4 ամիս 7 օր քննարկել է, այսինքն՝ ոչ ողջամիտ ժամկետում, և 23.09.2011թ. այն չպարզաբանված կերպով մերժել է: 9/ Հ.Օհնիկյանի կողմից ՀՀ ոստիկանության ԱՎ վարչություն 12.01.2011թ. ներկայացված դիմումը դատարանը չի համարել վարչական վարույթի հարուցման հիմք և ԱՎ վարչության 31.01.2011թ. թիվ 25/01-3725 գրությունը չի դիտել որպես միջամտող վարչական ակտ: Նման պայմաններում դատարանն ինչպես է եկել եզրահանգման, որ Հ. Օհնիկյանը 12.01.2011թ. դիմումը ներկայացրել է՝ հիմք ընդունելով Թ.Օհնիկյանի կողմից իր անվամբ հասարակ գրավոր ձևով տրված գործող լիազորագիրը, որում Թ. Օհնիկյանը հղում է կատարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածին և նույն հոդվածի կարգով էլ Հ.Օհնիկյանը դիմում է ներկայացրել վարչական մարմին: 11/ Դատարանը 28.10.2011թ. վճռում չի ամրագրել և չի նախանշել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը. 12/ Գործողությունների ոչ իրավաչափ լինելը՝ 13.07.2011թ. նախնական դատական նիստում հայցվորի ներկայացուցչի կողմից վիճարկման հայցի ձևով հայցադիմումի լրացում ներկայացնելը արձանագրային որոշմամբ թույլատրելու և վարույթ ընդունելու կապակցությամբ, այն պարագայում, երբ 13.07.2011թ. հայցադիմումի լրացմամբ հայցվորի ներկայացուցիչը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կարգով դատարան չի ներկայացրել վիճարկման հայցի համար նախատեսված պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը և հայցադիմումի լրացմանը կցված չի եղել պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու

միջնորդությունը, որպիսի պայմաններում հայցվորի ներկայացուցիչ Ա.Խաչատրյանը վիճարկման հայցի համար օրենքով սահմանված 4000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի վճարումը կատարել է միայն «25.10.2010թ.» թվագրված տվյալներով «ՎՏԲ-Հայաստան» բանկում կատարված վճարման թիվ 101025024740072 անդորրագրով, որն առկա է վարչական գործ 82-րդ էջում: Հատկանշական է, որ վճարման տարեթիվն անդորրագրի վրա նշագրված է 2010թ., որպիսի հանգամանքին դատարանն առհասարակ ուշադրություն չի դարձրել, սակայն, կարելի է ենթադրել, որ վճարումը կատարվել է 25.10.2011թ., այսինքն՝ վճիռ կայացնելուց 3 օր առաջ, և անհայտ է, թե ինչ հանգամանքներում և ինչ կերպ է դատարանը թույլատրել նշված 25.10.2011թ. անդորրագիրը կցել վարչական գործի նյութերին, այն պարագայում, երբ 14.10.2011թ. վարչական գործով արդեն իսկ դատաքննությունն ավարտված է եղել և դատարանը հայտարարել է վճռի հրապարակման օրն ու ժամը, իսկ 25.10.2011թ. պարզապես հնարավոր չէր վարչական գործով դատական նիստ կայացնել ու այդ անդորրագիրը կցել գործի նյութերին:

Վերաքննիչ բողոքը քննության ընդունելու մասին հիմնավորումները և բողոքի պահանջը

Դատարանը հաստատված է համարել այն հանգամանքը, որ Թագուհի Օհնիկյանը 22.11.2010թ. դիմել է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն՝ իր փոքրահասակ որդուն՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանին (ծնված 19.02.2008թ.) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրելու խնդրանքով: Թ.Օհնիկյանի 22.11.2010թ. դիմումի հիման վրա ԱՎ վարչությունում հարուցվել է վարչական վարույթ, որն ավարտվել է 23.11.2010թ.՝ Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանին ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրելու մասին բարենպաստ վարչական ակտի ընդունմամբ, այսինքն՝ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի համաձայն իրավունքը խնդրարկած անձին պետք է տրվեր ՀՀ-ում ժամանակավոր կացության քարտը:

Դատարանը միաժամանակ հաստատված է համարել այն հանգամանքը, որ Հասմիկ Օհնիկյանն իր անվամբ Թագուհի Օհնիկյանի կողմից հասարակ գրավոր ձևով 30.11.2010թ. տրված լիազորագրի հիման վրա 12.01.2011թ. դիմում է ներկայացրել ՀՀ ոստիկանության ԱՎ վարչություն՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը՝ ժամանակավոր կացության քարտը, ստանալու խնդրանքով:

Դատարանն այն հետևությանն է եկել, որ փաստորեն Հասմիկ Օհնիկյանը, որպես Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի մոր՝ օրինական ներկայացուցիչ Թագուհի Օհնիկյանի ներկայացուցիչ, դիմում է ներկայացրել վարչական մարմին՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն՝ գործողություն կատարելու՝ վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտը՝ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի համաձայն ձևակերպված ժամանակավոր կացության քարտի տեսքով իրեն տրամադրելու խնդրանքով: Դատարանը հաստատված է համարել, որ Հասմիկ Օհնիկյանի 12.01.2011թ. դիմումին ի պատասխան, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը 31.01.2011թ. թիվ 25/01-3725 գրությամբ հայտնել է, որ Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի՝ Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը վերջինիս տրամադրելու մասին պահանջն իրավաչափ չէ, քանի որ վարույթի մասնակից չի հանդիսացել, վարույթի ընթացքում մասնակցի ներկայացուցիչ նույնպես չի հանդիսացել, և ներկայացված լիազորագրով նրան ՀՀ-ում ժամանակավոր կացության

կարգավիճակը հաստատող փաստաթուղթը չի կարող տրամադրվել:
Վերոգրյալ իրավանորմերից, հաստատված հանգամանքներից, եզրահանգումներից և պատճառաբանություններից ելնելով դատարանը գտել է, որ Հասմիկ Օհնիկյանի կողմից, որպես Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի օրինական ներկայացուցիչ՝ մոր Թագուհի Օհնիկյանի ներկայացուցիչ վարչական մարմնին՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը ներկայացված գործողություն կատարելու՝ վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտը՝ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի համաձայն ձևակերպված ժամանակավոր կացության քարտի տեսքով իրեն տրամադրելու մասին 12.01.2011թ. դիմումի քննարկման արդյունքում, Հասմիկ Օհնիկյանի անվամբ հասցեագրված ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության 31.01.2011թ. թիվ 25/01-3725 գրությունը վարչական ակտ չի հանդիսանում, վարչական մարմինը չի կատարել դիմումով խնդրարկված գործողությունը՝ իրականացրել է վարչարարություն, որը դրսևորվել է անգործությամբ, որի մասին գործողություն խնդրարկած անձին հայտնվել է 31.01.2011թ. թիվ 25/01-3725 գրությամբ, որպիսի անգործությունը անձի համար առաջացրել է փաստական հանգամանքներ, որպես Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի օրինական ներկայացուցիչ՝ մոր Թագուհի Օհնիկյանի ներկայացուցիչ հանդես եկած Հասմիկ Օհնիկյանին չի տրամադրվել դեռևս 23.11.2010թ. ընդունված՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանին Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրելու մասին բարենպաստ վարչական ակտը՝ ձևակերպված «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության քարտի ձևով:
Դատարանը անդրադառնալով հայցվորի ներկայացուցչի կողմից հայցադիմումի լրացմամբ ներկայացված վիճարկման հայցին, որով ներկայացվել է Հասմիկ Օհնիկյանին հասցեագրված ՀՀ ոստիկանության ԱՎ վարչության 31.01.2011թ. թիվ 25/01-3725 գրությունն անվավեր ճանաչելու պահանջ, նշված գրությունը դատարանի եզրահանգումներով վարչական ակտ չի հանդիսանում, այն չի կարող որպես վարչական ակտ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով վիճարկվել, որպիսի պայմաններում դատարանը գտել է, որ ԱՎ վարչության վերը նշված գրությունն անվավեր ճանաչելու պահանջն (վեճը) ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին և 28.10.2011թ. վճռով դատարանը վճռել է այդ մասով վարչական գործի վարույթը կարճել:
Դատարանը ոչ պատշաճ հիմնավորվածությամբ հաստատված է համարել, որ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից վարույթի մասնակից անգործունակ Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի օրինական ներկայացուցիչ Թագուհի Օհնիկյանի ներկայացուցչի դիմումի հիման վրա անգործություն է ցուցաբերվել՝ ընդունված վարչական ակտի՝ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամանակավոր կացության ակտի ձևով ձևակերպված Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը չտրամադրելն իրավաչափ չէ, և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 59-րդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ, 318-րդ և 321-րդ հոդվածների սխալ մեկնաբանման արդյունք է:
Բացի այդ, դատարանն այն հետևությանն է հանգել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով, հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերով նախատեսված չէ որևէ սահմանափակում այն մասին, որ անձը, որը մասնակցել է վարչական վարույթին, զրկված է վարույթի

ընթացքում ընդունված վարչական ակտին իր ներկայացուցչի (նաև վարչական վարույթին չներգրավված ներկայացուցչի) միջոցով իրազեկվելու, այդ թվում նաև՝ ներկայացուցչի միջոցով իր համար բարենպաստ կամ միջամտող վարչական ակտը ստանալու իրավունքից:
Դատարանը անտեսելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ ամրագրել է դատական ակտում: Նախ, վերը նշված իրավական ակտերում որևէ իրավանորմ և դրույթ չկա օտարերկրացու կողմից իր անվամբ և իրեն տրվող՝ ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը՝ քարտը, ներկայացուցչի միջոցով ստանալու կամ այն ստանալը թույլատրելու մասին:
«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության 07.02.2008թ. թիվ 134-Ն որոշման մեջ ամրագրված է միայն «օտարերկրացիներ» հասկացությունը, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերը նշված հոդվածների դրույթներում արծարծվում է միայն «վարույթի մասնակիցներ» հասկացությունը, և ոչ ավելին: Կոնկրետ սույն գործով, Իսպանիայի քաղաքացի՝ փոքրահասակ Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի (ծնված 19.02.2008թ.) պարագայում, առանց որևէ լիազորագրի, ժամանակավոր կացության քարտը միանշանակ կերպով անարգել իրավունք ուներ ստանալու վարչական վարույթի մասնակից հանդիսացած վերջինիս մայրը՝ օրինական ներկայացուցիչ Թագուհի Օհնիկյանը, որը, սակայն, պատշաճ իրազեկված լինելով՝ հրաժարվել է ներկայանալ ԱՎ վարչություն՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության կարգով իրեն՝ որպես վարույթի մասնակցի, գրավոր վարչական ակտն որպես կանոն ստորագրությամբ առձեռն հանձնելու համար, բացի այդ էլ, վերջինս վարչական մարմնին չի խնդրել և չի միջնորդել կիրառելու հանձնման այլ միջոցներ:
Հետևաբար այս դեպքում, երբ փոքրահասակ օտարերկրացու օրինական ներկայացուցիչը, որպես վարույթի մասնակից, չի ներկայանում վարչական մարմին և չի ստանում քարտը, ապա օրինական ներկայացուցիչը լիազորված անձի՝ ներկայացուցչի միջոցով քարտը կարող էր ստանալ միայն լիազորված անձին բացառապես նոտարական կարգով կամ պատշաճ վավերացված լիազորագիր տրամադրելու միջոցով, որպիսի հանգամանքը բացակայել է Հ.Օհնիկյանի պարագայում՝ 30.11.2010թ. մինչև 13.07.2011թ. ընկած ժամանակահատվածում: Թ.Օհնիկյանը միայն դատարանի պահանջով է Իսպանիայից ուղարկել 18.05.2011թ. նոտարական կարգով վավերացված, Հ.Օհնիկյանի անվամբ տրված լիազորագիր, որպեսզի վերջինս ստանա իր փոքրահասակ որդու ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող քարտը, որպիսի լիազորագիրը հայցվորի ներկայացուցիչը դատարան է ներկայացրել միայն 13.07.2011թ. կայացած դատական նիստի ընթացքում: Ուշագրավ է և հատկանշական, որ դատարանում, վարչական գործի քննության ընթացքում հայցվորի ներկայացուցիչն ընդունել է այն էական նշանակություն ունեցող հանգամանքը, որ Թագուհի Օհնիկյանը վարչական մարմնի կողմից պատշաճ իրազեկված է եղել, որպեսզի ներկայանա վարչական մարմին և որպես կանոն առձեռն ստանա գրավոր վարչական ակտը՝ կացության քարտը, սակայն չի ներկայացել:
Վերը նշվածն ընդհանրացնելով, բազմակողմանի և ճշգրիտ վերլուծելով, կարելի է վստահաբար փաստել, որ միայն նոտարական վավերացում ունեցող կամ նոտարի վավերացրած լիազորագրերին հավասարեցված, պատշաճ կարգով տրված լիազորագրի առկայության պայմաններում կարող էր միայն Հասմիկ Օհնիկյանը՝ որպես փոքրահասակ օտարերկրացու օրինական ներկայացուցչի ներկայացուցիչ, վարչական մարմնից ստանալ իրեն լիազորողի որդու՝ ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող քարտը, որպիսի էական նշանակություն ունեցող

հանգամանքը բացակայել է սույն վարչական գործի մինչդատական վարույթի ընթացքում: Մինչդեռ, դատարանը, վարչական վարույթով չպայմանավորված, հասարակ գրավոր ձևով տրված լիազորագրով անձի կողմից վարչական մարմնում հանդես գալու հանգամանքը պարզապես անթույլատրելի և ոչ իրավաչափ կերպով անվերապահորեն ընդունել է որպես բացարձակ և գերակա չափանիշ:
«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի՝ օտարերկրացուն ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ և դրան համապատասխան՝ ՀՀ-ում ժամանակավոր կացության քարտ տրամադրելու իրավահարաբերությունները կարգավորող 3-րդ հոդվածում, 14-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետում և 2-րդ մասում, 15 և 17-րդ հոդվածներում արծարծվում է միայն «օտարերկրացիներ» հասկացությունը, նշված հոդվածների իրավանորմերով առհասարակ նախատեսված չէ օտարերկրացու կողմից ներկայացուցչի միջոցով հանդես գալու որևէ դրույթ:
ՀՀ կառավարության 07.02.2008թ. թիվ 134-Ն որոշմամբ սահմանված կարգի 6-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիներին տրվում է համապատասխանաբար ժամանակավոր կացության կամ մշտական կացության քարտ:
Որոշման «Ժամանակավոր կացության քարտի և մշտական կացության քարտի նկարագիրը և ձևը» հավելվածի 1-ին կետում նշված է, որ՝«Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության և մշտական կացության քարտերը Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացու ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակը հաստատող հիմնական փաստաթղթեր են»: Հավելվածի 2-րդ կետում ամրագրված է, որ քարտի դիմային էջի ստորին ձախ հատվածում տեղ է հատկացված օտարերկրացու լուսանկարը փակցնելու համար: Լուսանկարից ներքև նախատեսված է տող՝ քարտը ստացողի ստորագրության համար:
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «վարչական վարույթում վարույթի մասնակիցները կարող են մասնակցել ինքնուրույն, իրենց ներկայացուցիչների միջոցով կամ նրանց հետ միասին»: Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «վարչական վարույթում որպես վարույթի մասնակիցների ներկայացուցիչներ կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով լիազորված անձինք, այդ թվում՝ փաստաբանները», 2-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ «վարույթի անգործունակ մասնակիցներին վարչական վարույթում ներկայացնում են նրանց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված օրինական ներկայացուցիչները», իսկ 3-րդ մասի երկրորդ պարբերության համաձայն՝ «լիազորագրի համար նոտարական վավերացում չի պահանջվում»:
Դատարանը գտել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը վարույթի մասնակիցներին հնարավորություն է ընձեռում վարույթում հանդես գալ նաև իրենց ներկայացուցիչների միջոցով, ընդ որում՝ վարույթի մասնակցի ներկայացուցիչ են համարվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով լիազորված անձինք, այսինքն՝ վարչական վարույթի ընթացքում ներկայացուցչության նկատմամբ տարածելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նշված իրավահարաբերությունը կարգավորող նորմերը:
Դատարանը վկայակոչել է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածը, համաձայն որի՝ «Մեկ անձի /ներկայացուցչի/ կողմից ուրիշ անձի /ներկայացվողի/ անունից լիազորագրի, օրենքի կամ դրա համար լիազորված պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական

	իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում է անմիջականորեն ներկայացվողի համար», ապա վճռում հղում է կատարել Օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասին, համաձայն որի՝ «լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար»: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ հոդվածի համաձայն, «տասնչորս տարեկան չդարձած անչափահասների (փոքրահասակների) փոխարեն գործարքները, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետում նշվածների, նրանց անունից կարող են կնքել միայն նրանց ծնողները, որդեգրողները կամ խնամակալները»: Վերը շարադրվածից դատարանը հիմնավորված է համարել, որ վարչական վարույթի անգործունակ մասնակցի օրինական ներկայացուցիչը, վարչական մարմնի հետ փոխհարաբերություններում իրավունք ունի իր հերթին հանդես գալու ներկայացուցչի միջոցով: Դատարանը, հղում կատարելով վերը նշված իրավական ակտերի դրույթներին, անտեսել և սույն վարչական գործով վճիռ կայացնելիս չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածով, 294-րդ հոդվածի 1-ին մասով, 296-րդ, 297-րդ և 299-րդ հոդվածներով, 300-րդ հոդվածի 1-ին մասով, 305-րդ հոդվածով, 321-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 323-րդ հոդվածներով ամրագրված նորմերն ու դրույթները: Դատարանը անտեսել է այն կարևոր հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բացառության նոտարական վավերացում պահանջվող գործարքների, հասարակ գրավոր ձևով պետք է կնքվեն ՝ 1. իրավաբանական անձանց՝ միմյանց միջև և քաղաքացիների հետ գործարքները. 2. քաղաքացիների միջև աշխատավարձի սահմանված նվազագույն չափի քսանապատիկ գումարը գերազանցող, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ անկախ գումարի չափից, գործարքները: Նշված հոդվածի դրույթների բազմակողմանի և օբյեկտիվ վերլուծությունը հիմնովին փաստում է, որ Թագուհի Օհնիկյանի կողմից հասարակ գրավոր ձևով Հասմիկ Օհնիկյանի անվամբ 30.11.2010թ. տրված լիազորագիրը՝ որպես գործարք, վարչական վարույթի դուրս այդ լիազորագրով վարչական մարմնում հանդես գալու և օտարերկրացուն տրվող իրավաստեղծ պաշտոնական փաստաթուղթը ստանալու համար չէր կարող կազմվել հասարակ գրավոր ձևով, քանի որ այն չի պարունակում 297-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում կնքված գործարքների հատկանիշներ, որպիսի պայմաններում 12.01.2011թ. վարչական մարմնում հանդես գալու և օտարերկրացու՝ ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթը՝ քարտը ստանալու համար, Թ.Օհնիկյանի կողմից Հ.Օհնիկյանի անվամբ պետք է տրվեր բացառապես նոտարական կարգով վավերացված կամ նոտարի վավերացրած լիազորագրերին հավասարեցված կարգով տրված լիազորագրով: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին»: Դատարանն անտեսել և վճիռ կայացնելիս չի կիրառել «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 57-րդ հոդվածով ամրագրված նորմերն ու դրույթները, որոնք անմիջականորեն կիրառելի էին և պետք է կիրառվեին սույն վարչական գործի քննության, այնպես էլ մինչդատական վարույթի ընթացքում: Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «նոտարը վավերացնում է գործարքներ (պայմանագրեր, կտակներ, լիազորագրեր, համաձայնագրեր և այլն)»: Դատարանը ընդունել և հաստատված է համարել պատասխանող

կողմի այն իրավաչափ դիրքորոշումը, որ հայցվոր Համիկ Օհնիկյանը չի հանդիսացել ոչ վարչական վարույթի մասնակից, ոչ էլ վարչական վարույթի ընթացքում որպես մասնակցի ներկայացուցիչ:
ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝
1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ...
Վերը նշված հոդվածից հետևում է, որ անձն իր իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանություն կարող է հայցել միայն այն դեպքում, եթե գտնում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ անմիջականորեն խախտվել կամ կարող են խախտվել նրա իրավունքները կամ օրինական շահերը: Նշվածից հետևում է նաև, որ վարչական արդարադատություն հայցող անձի պահանջը կարող է բավարարվել միայն նրա՝ շահագրգիռ անձ լինելու դեպքում, այն է՝ եթե խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները (ՀՀ Վճռաբեկ դատարանի 29.10.2010թ. թիվ ՎԴ/4342/05/09 վարչական գործով կայացված որոշում):
Դատարանը 28.10.2011թ. վճռով հաստատված է համարել, որ վարչական մարմինը ոչ իրավաչափ կերպով մերժել է Հ.Օհնիկյանի 12.01.2011թ. դիմումով գործողության կատարման խնդրարկումը, և իրականացրել է վարչարարություն, որը դրսևորվել է ոչ իրավաչափ անգործությամբ, և այն Հ.Օհնիկյանի համար առաջացրել է փաստական հետևանքներ, այսինքն՝ վարչական մարմնի կողմից դրսևորած իբրև թե ոչ իրավաչափ անգործության հետևանքով խախտվել են Հ.Օհնիկյանի իրավունքները, և վերջինս իր խախտված իրավունքները վերականգնելու նպատակով որպես հայցվոր հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան:
Հ.Օհնիկյանը՝ որպես ֆիզիկական անձ, իրավունք ուներ սահմանված կարգով դիմելու ՀՀ վարչական դատարան, համարելով, որ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի գործողություններով կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել իր երաշխավորված իրավունքները: Հ.Օհնիկյանի իրավունքների խախտման մասին խոսք կարող էր գնալ միայն այն դեպքում, երբ վարչական մարմնին ուղղված նրա պահանջն իրավաչափ լիներ, և վարչական մարմինն էլ ոչ իրավաչափ կերպով անգործություն դրսևորած լիներ, որպիսի հանգամանքները բացակայում են Հ.Օհնիկյանի պարագայում:
Վերը նշվածն ընդհանրացնելով ու բազմակողմանի վերլուծելով՝ գտնում է, որ դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերի կարգով Հ.Օհնիկյանի հայցադիմումի ընդունումը կամ վարույթ ընդունված հայցը պետք է մերժեր, քանի որ հայցը ենթակա չէր վարչական դատարանում քննության, և հայցադիմումը ներկայացրել է դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը, իսկ դատարանը հայցադիմումը ընդունելով վարույթ, ավելին՝ բավարարել է հայցը:
Դատարանը, վճռում պատշաճ իրավական գնահատականի ու հետևության չի արժանացրել այն էական նշանակություն ունեցող հանգամանքը, որ պատասխանողի ներկայացուցչի կողմից 16.05.2011թ. նախնական դատական նիստի ընթացքում միջնորդություն է հարուցվել դատաձեռագրաբանական

	փորձաքննություն նշանակելու մասին: 23.09.2011թ. դատարանը, ի վերջո քննելով միջնորդությունը, մերժել է այն՝ պատճառաբանելով ու հետագայում նաև 28.10.2011թ. վճռի մեջ ամրագրելով, որ Թ.Օհնիկյանի կողմից Իսպանիայից ուղարկված, նոտարական կարգով վավերացված լիազորագրով հաստատված է համարել այն հանգամանքը, որ վարույթի մասնակից Իսպանիայի քաղաքացի, 19.02.2008թ. ծնված Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի մոր՝օրինական ներկայացուցիչ Թագուհի Օհնիկյանը, 30.11.2010թ. հասարակ գրավոր ձևով Հասմիկ Օհնիկյանի անվամբ տրված լիազորագրով, վերջինիս լիազորել է նաև իր անունից հանդես գալու ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում, այդ թվում՝ իր փոխարեն իր որդու՝ ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթղթերը ստանալու նպատակով: Նշված հանգամանքը դատարանը հաստատված է համարել՝ հաշվի առնելով նաև գործի քննության ընթացքում հայցվորի ներկայացուցչի կողմից դատարանի պահանջով ներկայացված Թագուհի Օհնիկյանի կողմից տրված նոտարական կարգով վավերացված լիազորագիր: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը մատնանշում է այն փաստերը, որոնք, իր կարծիքով, էական են վեճի լուծման համար, և անհրաժեշտության դեպքում կողմերից պահանջում է ներկայացնել այդ փաստերի ապացույցներ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես, պահանջելու վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստի: ՀՀ Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներով արդեն իսկ արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացումը թեև դատարանի իրավունքն է, սակայն դատարանի այդ իրավունքը սահմանափակված է նույն օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգելու դատարանի պարտականությամբ և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից (ՀՀ Վճռաբեկ դատարանի 17.04.2009թ. որոշումը, վարչական գործ թիվ ՎԴ/5525/05/08(2009թ.)): Դատարանը, պատասխանող ներկայացուցչի կողմից դատաձեռագրաբանական փորձաքննություն նշանակելու մասին հարուցած միջնորդությունը անհիմն կերպով մերժելով՝ անտեսել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը և չի կատարել գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ու հետազոտում: Թ.Օհնիկյանի կողմից Իսպանիայից ուղարկված, նոտարական կարգով վավերացված լիազորագիրը հայցվորի ներկայացուցչից ստանալով, իսկ պատասխանողի ներկայացուցչից ստանալով Թ.Օհնիկյանի կողմից 30.11.2010թ. հասարակ գրավոր ձևով տրված լիազորագրի բնօրինակը, դատարանը, պահանջվող գիտության և տեխնիկայի բնագավառների հատուկ գիտելիքների պարագայում,

պարզապես չէր կարող պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում գնահատել և հավաստիանալ 22.11.2010թ. դիմումում և 30.11.2010թ. լիազորագրում Թ.Օհնիկյանի անվան դիմաց առկա ստորագրությունների հավաստության և իսկության վերաբերյալ, այլ միայն հիմք ընդունելով Թ.Օհնիկյանի՝ Իսպանիայից ուղարկված նոտարական կարգով վավերացված լիազորագիրը, ակնհայտ կերպով մերժել է միջնորդությունը:
Թեև Թ.Օհնիկյանի կողմից Իսպանիայից ուղարկված նոտարական կարգով վավերացված լիազորագրում վերջինս նշել է, որ 30.11.2010թ. հասարակ գրավոր ձևով տրված լիազորագիրը կազմվել և ստորագրվել է անձամբ իր կողմից, սակայն հատկանշական է, որ Թ.Օհնիկյանը նշված լիազորագրով կամ դրան կից չի ուղարկել իր ստորագրության նմուշը, և ոչ էլ դատարանն է նման պահանջ ներկայացրել Թ.Օհնիկյանին: Գտնում է, որ նշված հանգամանքն անթույլատրելի է միայն օտարերկրյա պետությունում գտնվող քաղաքացու՝ թեկուզ նոտարի մոտ կատարած հայտարարությունն ընդունել որպես բացարձակ ճշմարիտ և արժանահավատ, այն պարագայում, երբ իրավակիրառական պրակտիկային հայտնի է այդ խնդրահարույց հարցի միակ օբյեկտիվ և ճշգրիտ լուծումը՝ համապատասխան փորձաքննություն նշանակելը և կատեգորիկ հետևություններով հիմնավորված փորձագետի եզրակացությունը ստանալը: Դատարանի այդ հետևությունից բխում է, որ անձը, եթե նոտարի մոտ հայտարարում է, որ ինքն է ստորագրել 30.11.2010թ. լիազորագիրը, ուրեմն դա բացարձակ ճշմարիտ է, այն պետք է անվերապահորեն ընդունել, մինչդեռ դատարանը կարող էր նշանակել փորձաքննություն և հստակ պարզաբանում ստանալ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքին:
Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Իսպանիայից ուղարկված լիազորագրում Թագուհի Օհնիկյանի կողմից առհասարակ որևէ հայտարարություն և հիշատակում չկա 22.11.2010թ. վարչական մարմին՝ ՀՀ ոստիկանության ԱՎ վարչություն, ներկայացված դիմումում իր անվան դիմաց առկա ստորագրության իսկության և հավաստիության վերաբերյալ, որպիսի հանգամանքին անդրադարձել էր պատասխանողի ներկայացուցիչը դատաքննության ընթացքում, մինչդեռ սույն էական նշանակություն ունեցող հանգամանքին դատարանի կողմից միջնորդությունը մերժելիս առհասարակ որևէ իրավական գնահատական չի տրվել և անտեսվել է, որ Թագուհի Օհնիկյանի անվամբ 22.11.2010թ. ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն ներկայացված դիմումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի և 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի ուժով հանդիսացել է վարչական վարույթ հարուցելու միակ հիմքը:
Փորձաքննությունը նշանակելու մասին միջնորդությունը մերժելիս դատարանը պետք է հաշվի առներ այն հանգամանքը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետը նույնպես նույն իրավական դրույթն է պարունակում:
Վերը շարադրվածից կարելի միանշանակ կերպով փաստել, որ դատարանը, սուբյեկտիվ եզրահանգումներ է կատարել և իր դիրքորոշումը հայտնել հատուկ գիտելիքներ պահանջող այնպիսի հարցերի վերաբերյալ, որոնց մասին կատեգորիկ հետևություններով եզրակացություն կարելի էր ակնկալել միայն փորձաքննություն նշանակելու մասին միջնորդությունը բավարարելու արդյունքում՝ մասնագիտացված փորձագիտական հաստատության աշխատողի կամ որպես փորձագետ նշանակված այլ մասնագետի կողմից, որը դատարանը չկատարելով՝ մերժել է պատասխանողի

	ներկայացուցչի հարուցած միջնորդությունը: Թագուհի Օհնիկյանը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի դրույթներին հղում կատարելով՝ հասարակ գրավոր ձևով Հասմիկ Օհնիկյանի անվամբ 30.11.2010թ. տվել է լիազորագիր, որով վերջինիս վերապահել է հետևյալ լիազորությունները՝ 1. Իմ անունից հանդես գալու ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն, այդ թվում իմ փոխարեն ստանալ որդուս՝ Նարեկ Լուիսի Ռենդոնի կացության կարգավիճակը հավաստող փաստաթղթերը: 2. Իմ անունից հանդես գալու ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի բոլոր տարածքային ստորաբաժանումներում, նոտարական գրասենյակներում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ստանալ և հանձնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, կատարել վճարումներ. 3. Ներկայացնել ինձ դատական ակտերի հարկադիր կատարման փուլում, իրականացնելով իմ՝ որպես պահանջատեր կամ պարտապան բոլոր իրավունքները, ներկայացնել և հետ վերցնել կատարողական թերթը, ստանալ բռնագանձված գույքը և /կամ դրամը, բողոքարկել հարկադիր կատարողի գործողությունների դեմ, ներկայացնել դիմում, 4. Կատարել սույն լիազորությունների կատարման համար անհրաժեշտ բոլոր այլ գործողություններ, այդ թվում՝ իմ անունից ստորագրել, ստանալ և հանձնել փաստաթղթեր: Նշված լիազորագրում առհասարակ բացակայում է Թագուհի Օհնիկյանի կողմից Հասմիկ Օհնիկյանին վերապահված հստակ և կոնկրետ լիազորություն, որով վերջինս լիազորված կլիներ Թ.Օհնիկյանի անունից հանդես գալ կամ նրան ներկայացնել ՀՀ դատական տարբեր ատյաններում, այդ թվում՝ ՀՀ վարչական դատարանում, որպիսի պայմաններում պարտադիր կլիներ Թ.Օհնիկյանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասերի պահանջների պահպանմամբ Հ.Օհնիկյանին համապատասխան լիազորագրի տրամադրումը, մինչդեռ սույն էական նշանակություն ունեցող հանգամանքը բացակայել է վերջիններիս պարագայում: Բացի այդ, Թ.Օհնիկյանը լիազորագրով չի վերապահել Հ.Օհնիկյանին վերալիազորման իրավունք՝ լիազորագրով նախատեսված գործողությունների կատարումն այլ անձի կամ անձանց վերալիազորելու մասին: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անգործունակ և սահմանափակ գործունակ քաղաքացու իրավունքները և ազատությունները դատարանում պաշտպանում է նրա օրինական ներկայացուցիչը, իսկ նույն հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ օրինական ներկայացուցիչները և ի պաշտոնե ներկայացուցիչներն իրենց հերթին կարող են գործերի վարումը դատարանում լիազորել իրենց կողմից ընտրված մեկ կամ մի քանի ներկայացուցչի: Օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացու տված լիազորագիրը վավերացնում է նոտարը կամ հաստատում է օրենքով նման իրավասություն ունեցող պաշտոնատար անձը: Նույնանման դրույթներ և նորմեր են պարունակում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասը, 43-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը: Սույն գործով, գտնում է, որ անգործունակ, փոքրահասակ Նարեկ Լուիս Ռենդոն Ալբերտոյի Օհնիկյանի իրավունքները և ազատությունները վարչական դատարանում պետք է պաշտպաներ վերջինիս օրինական ներկայացուցիչը՝ Թագուհի Օհնիկյանը, կամ վերջինս իրավունք ուներ և կարող էր գործերի վարումը դատարանում լիազորել իր կողմից ընտրված մեկ կամ մի քանի ներկայացուցչի: Հանրահայտ և անվիճելի փաստ է, որ Թագուհի Օհնիկյանը ՀՀ վարչական դատարան հայց չի ներկայացրել, և ոչ էլ լիազորել կամ

հանձնարարել է Հ.Օհնիկյանին դատարանում հանդես գալ որպես իր ներկայացուցիչ: Մինչդեռ Հ.Օհնիկյանը, համարելով, որ վարչական մարմնի՝ իբրև թե ոչ իրավաչափ անգործությամբ խախտվել են իր իրավունքները, որպես դատավարության ինքնուրույն մասնակից՝ հայցվոր, այլ ոչ թե Թ.Օհնիկյանի ներկայացուցիչ, հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան, որն էլ դատարանը վարույթ է ընդունել և չհիմնավորված կերպով բավարարել է հայցը:
Բացի այդ, դատարանն առհասարակ որևէ իրավական գնահատական չի տվել և չի անդրադարձել Թ.Օհնիկյանի կողմից հասարակ գրավոր ձևով Հ.Օհնիկյանի անվամբ 30.11.2010թ. տրված լիազորագրի 3-րդ և 4-րդ կետերով վերապահված լիազորություններին: Լիազորագրի 3-րդ կետով Հասմիկ Օհնիկյանին վերապահված լիազորությունները պարզապես անթույլատրելի են՝ սույն լիազորագրի հասարակ գրավոր ձևով տրված լինելու հանգամանքով պայմանավորված: Դատարանը նշված լիազորագրի անվավերության առումով չի կիրառել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին պարբերությունը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածը: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ ներկայացուցչի լիազորությունները պետք է հաստատված լինեն նոտարի կամ օրենքով նման իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից վավերացված լիազորագրով, որպիսի հանգամանքը, ինչպես հայտնի է, ի սկզբանե բացակայել է Թ.Օհնիկյանի կողմից 30.11.2010թ. տրված լիազորագրի պարագայում:
30.11.2010թ. լիազորագրի 4-րդ կետով Հ.Օհնիկյանին վերապահված լիազորություններն անդեմ և երկիմաստ լիազորություններ են, որոնք շարադրված են անորոշ կերպով՝ ոչ պարզ և ոչ հստակ: Լիազորագրի 4-րդ կետով Հ.Օհնիկյանին վերապահված է փաստաթղթեր հանձնելու և ստանալու լիազորությունը, որպիսի հանգամանքը նույնությամբ ամրագրված է նաև լիազորագրի 2-րդ կետում:
Այս ամենը վկայում է, որ Թ.Օհնիկյանի կողմից հասարակ գրավոր ձևով Հ.Օհնիկյանի անվամբ 30.11.2010թ. տրված լիազորագրի անվավերության մասին:
Այսպիսով՝ սույն վերաքննիչ բողոքում պատասխանող կողմի վկայակոչված վերը նշված ապացույցների, փաստարկների և համապատասխան իրավական ակտերի դրույթների ու նորմերի բազմակողմանի և ճշգրիտ իրավական վերլուծությունը հիմնավորապես փաստում են, որ գործով պատասխանող ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը, մերժելով հայցվոր Հ.Օհնիկյանի ոչ իրավաչափ պահանջը՝ վարչական վարույթի մասնակից և վարչական վարույթում մասնակցի ներկայացուցիչ չհանդիսանալով, վարչական վարույթից դուրս, առանց նոտարական վավերացման, հասարակ գրավոր ձևով 30.11.2010թ. տրված լիազորագրով վարչական մարմնում հանդես գալու և իրեն լիազորողի՝ Թ.Օհնիկյանի փոքրահասակ որդու՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի՝ ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը՝ քարտն իրեն տրամադրելը, դրսևորել է իրավաչափ անգործություն՝ անշեղորեն պահպանելով ՀՀ գործող օրենսդրության պահանջները, մինչդեռ դատարանը, անտեսելով վերը նշվածը և չկատարելով գործի փաստական հանգամանքների ու ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ու հետազոտում, բավարարել է հայցը՝ կայացնելով գործն ըստ էության լուծող չհիմնավորված և չպատճառաբանված դատական ակտ:
Ելնելով վերոգրյալից խնդրել է բավարարել վերաքննիչ բողոքը և ամբողջությամբ բեկանել Վարչական դատարանի թիվ ՎԴ/0585/05/11 վարչական գործով 28.10.2011թ. կայացված վճիռը, փոփոխել այն և հայցվոր Հ.Օհնիկյանի հայցը մերժել:
Վերաքննիչ բողոքի լրացում.

Ամբողջությամբ պնդելով վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները, բողոքում շարադրված փաստարկները և պահանջը, խնդրում և միջնորդում են բողոքի շրջանակներում քննության առարկա դարձնել նաև հետևյալ էական նշանակություն ունեցող հանգամանքները.
Հայցվորի ներկայացուցչի կողմից ՀՀ վարչական դատարան 28.02.2011թ. ներկայացված հայցադիմումում և 13.07.2011թ. ներկայացրած հայցադիմումի լրացման մեջ ամրագրվել է հետևյալ ուշագրավ արտահայտությունը՝ «11.02.2011թ.-ին Հասմիկ Օհնիկյանը դիմել է «Այլեքս» փաստաբանական գրասենյակ իր խախտված իրավունքների վերականգնման նպատակով»:
Բացի այդ, ինչպես բխում է ««Այլեքս» ՍՊ ընկերության և ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան, սեփական նախաձեռնությամբ հանդես եկող Ա.Խաչատրյանի միջև 10.02.2011թ., կնքված ծառայությունների մատուցման պատվիրակման թիվ 040212 պայմանագրից, նշված ՍՊ ընկերությունը հանդես է եկել որպես «Պատվիրատու»՝ ի դեմս նրա տնօրեն Շավարշ Փեթակչյանի, որը գործել է կանոնադրության հիման վրա, իսկ ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Արամ Վարուժանի Խաչատրյանը՝ որպես «Կատարող» հանդես է եկել սեփական նախաձեռնությամբ:
Ինչպես բխում է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը հասցեագրված ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետ Ա.Գևորգյանի 07.12.2011թ. թիվ 3-2/3963-11 գրությունից, «Այլեքս» ՍՊ ընկերության մասնակիցներ են հանդիսանում Շավարշ Փեթակչյանը և Արամ Խաչատրյանը, որպիսի պայմաններում արդեն իսկ ոչ իրավաչափ է դառնում ՍՊ ընկերության հիմնադիր մասնակիցների միջև նշված պայմանագրի կնքման ընթացքում Արամ Խաչատրյանի կողմից նշված ՍՊԸ-ի մասնակից լինելը թաքցնելու և սեփական նախաձեռնությամբ հանդես գալու հանգամանքները, և որպես հետևանք, այն հանգեցնում է նշված գործարքի ի սկզբանե առոչինչ, անվավեր և շինծու լինելու մասին:
Թագուհի Օհնիկյանի կողմից Իսպանիայից ուղարկված, նոտարական կարգով վավերացված 18.05.2011թ. լիազորագրում առկա է Հ.Օհնիկյանին վերապահված հետևյալ լիազորությունը՝ «Այսպիսով, սույնով, լիազորում է իր քույր տիկին Հասմիկ Հակոբի Օհնիկյանին, որպեսզի նա կարողանա իրականացնել ցանկացած գործողություն, որն անհրաժեշտ կլինի վերոնշյալ փաստաթուղթը լիազորողի անունից ստանալու համար»:
Նշվածից բխում է, որ նոտարական կարգով վավերացված այդ լիազորագրում Թ.Օհնիկյանի կողմից Հ.Օհնիկյանին վերապահված լիազորությունը շարադրված են ոչ պարզ և ոչ հստակ, դրանք երկիմաստ, անհասկանալի և տարածական լայն մեկնաբանության տեղիք տվող անորոշ լիազորություններ են, որպիսի պայմաններում, գտնում են, որ այդ լիազորագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի 2-րդ պարբերության ուժով ի սկզբանե անվավեր և առոչինչ գործարք է, որը չի կարող առաջացնել որևէ իրավական հետևանքներ:
Վերը թվարկված փաստաթղթերն ի սկզբանե առկա են եղել թիվ ՎԴ/0585/05/11 վարչական գործում, սակայն դատարանը չկատարելով գործի փաստական հանգամանքների և ապացույցների բազմակողմանի, լրիվ ու օբյեկտիվ քննություն և հետազոտում՝ առհասարակ անտեսել է այդ ամենը, դրանք չի պարզաբանել և որևէ իրավական գնահատական չի տվել, մինչդեռ, գտնում են, որ նշված հանգամանքները պետք է քննության առարկա դառնան վերաքննիչ բողոքի շրջանակներում:
Դատարանի նշված գործողությունները հակասում են ՀՀ Սահմանադրական դատարանի 07.09.2010թ. թիվ ՍԴՈ-906 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմանը և ՀՀ Դատարանների նախագահների խորհրդի 17.09.2011թ. թիվ 127

որոշման դրույթներին և տրված պարզաբանումներին, որոնց համաձայն, կարելի է դիտարկել, որ անձը ցանկացած կամ վերացական պահանջներով դատական պաշտպանության դիմել չի կարող, այլ նա կարող է դիմել դատարան, երբ հանդիսանում է շահագրգիռ անձ, այսինքն՝ վարչական մարմնի կողմից խախտվել են անձի հանրային սուբյեկտիվ իրավունքները: Վարչական դատավարությունն առաջին հերթին ծառայում է մարդու և քաղաքացու իրավունքների, անձնական շահերի պաշտպանությանը: Դա նշանակում է, որ վարչական արդարադատություն կարող է հայցել միայն այն անձը (ֆիզիկական կամ իրավաբանական), որը գտնում է, որ վարչարարությամբ իր իրավունքները կամ շահերը անմիջականորեն շոշափվել են: Անձինք չեն կարող դատարանում հայցել անձամբ իրենց չվերաբերող որևէ վարչարարության ստուգում միայն այն պատճառով, որ նրանք ընհանրապես շահագրգռված են վարչական մարմինների իրավաչափ գործունեության մեջ: Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը ամրագրելով այս մոտեցումը, չի ճանաչում (բացառությամբ օրենսգրքով նախատեսված դեպքի), այսպես կոչված, հանրամատչելի գանգատը, ամրագրելով միայն խախտված իրավունքների, այսինքն, անձնական շահագրգռվածությունից հետևող դատական պաշտպանություն հայցելու տարբեր հնարավորություններ:
ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները երաշխավորում են անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքը: Որպես սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության երաշխիք՝ այն իրավական նախադրյալ է ստեղծում սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ինստիտուցիոնալ և դատավարական կառուցակարգերի ստեղծման համար: Այն, որպես դատական պաշտպանության մեխանիզմների ձևավորման և գործունեության անկյունաքար, երաշխավորում է իրական, խախտված սուբյեկտիվ իրավունքի պաշտպանությունը՝ յուրաքանչյուրին իրավունք վերապահելով դատարանում հայցելու իր և ոչ թե՝ այլ անձանց, կամ իր համոզմամբ խախտված իրական, այլ ոչ թե՝ «վերացական» իրավունքի պաշտպանություն:
Քանի որ, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքն առաջին հեթին հնարավորություն է ընձեռում հայց ներկայացնելու միայն այն ֆիզիկական և իրավաբանական անձանց, որոնց իրավունքները և շահերը խախտվել են, և նման հնարավորություն չի ընձեռում յուրաքանչյուր անձի՝ հանրության շահերը պաշտպանելու համար, այսինքն՝ չի թույլատրում իրականացնել իրավաչափության լոկ օբյեկտիվ վերահսկողություն, ապա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայց ներկայացնելու համար պետք է առկա լինի ոչ միայն վարչական մարմինների ոչ իրավաչափ որոշում, գործողություն կամ անգործություն, այլ նաև անձանց իրավունքների խախտում:
«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողովը) խնդրո առարկայի վերաբերյալ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.
«Առաջնային է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունենա վիճարկելու որոշումն այն հիմքով, որ այն խախտում է իր իրավունքները: Սակայն, եթե որոշումն անմիջականորեն չի խախտել անձի իրավունքները, ապա վիճարկման հնարավորության ընձեռումը ներպետական օրենսդրության կարգավորման խնդիր է»:
Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված դրույթների վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 04.04.2008թ. ՍԴՈ-747 որոշմամբ 7-րդ կետում ամրագրված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար

ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին համահունչ, ՀՀ օրենսդրությունը հիմնված է այն տրամաբանության վրա, որ խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, ի թիվս այլոց, ներառում է անմիջականորեն դատարան դիմելու իրավունքն այն անձանց կողմից, որոնց իրավունքները խախտվել են:
Անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ռեալ)» իրավունքներ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային որոշումներում անդրադառնալով այս հարցին նշել է, որ վեճը պետք է լինի իրական և իր բնույթով՝ լուրջ: Վեճը չի կարող կապված լինել անձի քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ անուշան կամ հեռակա կերպով, այլ հենց այդ իրավունքները և պարտականությունները պետք է վճռական և ուղղակի նշանակություն ու ազդեցություն ունենա պաշտպանվող իրավունքների և ազատությունների վրա:
ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում է՝ Վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե՝ «4) հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը.»:
Նշված իրավադրույթն ուղղակիորեն փոխկապված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի հետ, քանզի, եթե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներին համապատասխան անձը ներկայացված հայցադիմումով չի հանդիսանում «շահագրգիռ անձ», ապա նա դառնում է հայցադիմում ներկայացնելու իրավունք ակնհայտորեն չունեցող անձ:

2.1 Վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացրած անձի դիրքորոշումը և հիմնավորումները.
Բողոք բերող կողմը վկայակոչելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Օտարերկրացիների մասին», «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքները, ինչպես նաև ՀՀ Կառավարության 07.02.2008թ.-ի թիվ 134-Ն որոշումը՝ նշում է, որ տվյալ իրավական ակտերից որևիցե մեկում որևէ իրավական նորմ և դրույթ չկա օտարերկրացու կողմից իր անվամբ և իրեն տրվող՝ ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը՝ քարտը, ներկայացուցչի միջոցով ստանալու կամ այն ստանալը թույլատրելու մասին: Շարունակելով բողոք բերող կողմը վկայակոչում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը՝ պնդելով որ Թ.Օհնիկյանի որպես Նարեկ Լուիս Ալբերտոյի (Դենդոն Օհնիկյանի օրինական ներկայացուցի կողմից՝ կացության կարգավիճակը հավաստող փաստաթղթի հանձման այլ միջոցներ կիրառելու միջնորդության բացակայության պարագայում օրինական ներկայացուցիչը լիազորված անձի միջոցով քարտը կարող է ստանալ միայն լիազորված անձին բացառապես նոտարական կարգով կամ պատշաճ վավերացված լիազորագիր տրամադրելու միջոցով, որպիսի հանգամանքը բացակայել է:
Ուշագրավ է, որ բողոքարկող կողմն ինչպես առաջին ատյանում ներկայացված հայցադիմումի պատասխանում և գործի քննության ընթացքում դատարանի կողմից իրեն ուղղված բանավոր հարցմանն ի պատասխան, այնպես էլ քննարկվող վերաքննիչ բողոքում չի հիշատակել որևիցե նորմ, որով սահմանված կլիներ ՀՀ Ոստիկանության անձնագրերի վիզաների վարչությունում օրինական ներկայացուցչի լիազորված անձի լիազորությունների հավաստման համար բացառապես նոտարական կարգով վավերացված լիազորագրի առկայության անհրաժեշտությունը: Ուստի գտնում է, որ այն պայմաններում, երբ բացակայում է սույն գործի փաստական հանգամանքներին համապատասխանող իրավիճակում բացառապես նոտարական կարգով վավերացված լիազորագիր

	ներկայացնելու անհրաժեշտություն սահմանող որևէ իրավական նորմ, ՀՀ քաղաքացու համար լրացուցիչ պարտականություններ ստեղծող վարչական մարմնի պահանջը, այն է՝ բացառապես նոտարական կարգով վավերացված լիազորագիր ներկայացնելու պայմանն օրինական դիտարկել չի կարելի՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի երկրորդ պարբերության վերջին նախադասությունը, համաձայն որի ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով: Բացի այդ բողոք բերող կողմը, իր իրավական փաստարկները ներկայացնելով, հաշվի չի առնում այն հանգամանքը, որ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ, ՀՀ ոստիկանության անձնագրերի վիզաների վարչությունը՝ լինելով պետական մարմին իրավասու է կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված է Սահմանադրությամբ կամ օրենքներով, նաև այս իրավական հիմնավորումը հաշվի առնելով եզրակացնում է, որ ՀՀ Ոստիկանության անձնագրերի վիզաների վարչության կողմից բացառապես նոտարական կարգով վավերացված լիազորագիր ներկայացնելու պահանջը անհրաժեշտաբար պետք է ունենա համապատասխան իրավական հիմք, ինչը բացակայում է: Շարունակելով բողոքարկող կողմը վկայակոչել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի գործարքների ձևին և, մասնավորապես դրանց նոտարական վավերացմանը վերաբերվող մի շարք քաղաքացիաիրավական նորմեր՝ անդրադառնալով նաև «Նոտարական գործունեության մասին» ՀՀ օրենքի որոշ հոդվածների, ամենայն հավանականությամբ դրանով փորձելով հիմնավորել ՀՀ Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչությունում օրինական ներկայացուցչի լիազորված անձի՝ լիազորությունների հավաստման համար բացառապես նոտարական կարգով վավերացված լիազորագիր առկայության անհրաժեշտությունը, քանի որ ՀՀ Ոստիկանության անձնագրերի վիզաների վարչությունում հանդես գալը, դիմում տալը և այլն, ըստ բողոքարկող կողմի, հանդիսանում է քաղաքացիաիրավական գործարքի տեսակ: Գտնում է, որ վկայակոչված բոլոր հոդվածների կիրառելիությունը ՀՀ ոստիկանության անձնագրերի վիզաների վարչությունում իրականացվող վարչարարության շրջանակներում հերքվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին իսկ հոդվածի 6-րդ մասի ուժով, համաձայն որի մեկ կողմի՝ մյուսի վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա հիմնված գույքային՝ ներառյալ հարկային, ֆինանսական ու վարչական հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությունը և այլ իրավական ակտերը չեն կիրառվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ: Ինչ վերաբերվում է դատաձեռագրաբանական միջնորդության մերժմանն առնչվող հանգամանքի վերաբերյալ բողոք բերող կողմի դիտարկումներին, ապա հայցվոր կողմը սույնով պնդում է նախկինում իր արտահայտած հետևյալ դիրքորոշումը. Ի պատասխան 12.01.2011-ին Հասմիկ Հակոբի Օհնիկյանի դիմումի ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ 25/01-4725 գրությամբ դիմումատուին մերժվել է տրամադրել հայցվող փաստաթուղթը պատճառաբանելով, որ «վարչական վարույթը եզրափակված է, վերջինս չի մասնակցել վարչական վարույթին, և փաստաթուղթը տրամադրելու պահանջն իրավաչափ չէ», ինչպես տեսնում են տվյալ գրությամբ ոչ մի անդրադարձ չի կատարվել ներկայացված լիազորագրի արժանահավատության հարցին և անգամ բացառապես նոտարական կարգով վավերացված լիազորագիր ներկայացնելու անհրաժեշտությանը: Ավելին՝ բողոք բերողի կողմից բազմիցս հիշատակվող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» մասին ՀՀ օրենքի 10դդ հոդվածի համաձայն վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր

դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել, արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով, իսկ եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար: Այլ խոսքերով, եթե ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը, այնուամենայնիվ, հիմնավոր կերպով կասկածելի են թվացել ներկայացված լիազորագիրը Թ.Օհնիկյանի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ապա վերոշարադրյալ իրավական նորմերի ուժով հենց ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանն էր կրում պարտականություն ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար, այսինքն՝ կատարել փորձաքննություն կամ ցանկացած այլ միջոցներով ստուգեր ստորագրության իսկությունը, ինչը վերջինիս կողմից չէր կատարվել փոխարենը տրամադրվել էր պատասխան, համաձայն որի վարչական վարույթը եզրափակված է, Հ.Օհնիկյանը չի մասնակցել վարչական վարույթին, և վերջինիս փաստաթուղթը տրամադրելու պահանջը իրավաչափ չէ: Վերաքննիչ բողոքում նաև անդրադարձ է կատարվել Հ.Օհնիկյանի կողմից ի հավաստում վստահորդին լիազորությունների տրամադրված լիազորագրում առկա «Այլեքս» փաստաբանական գրասենյակի անվանման և որոշ տվյալների գրառման իրավաչափությանը տվյալ հանգամանքով պայմանավորելով լիազորագիրը շինծու լինելու բողոք բերողի ներկայացված փաստարկը: Գտնում է, որ նշված փաստական հանգամանքն առնչվում է Այլեքս փաստաբանական գրասենյակի գործավարության ձևի ընտրությանը, որը այս առումով որևիցե օրենսդրական սահմանափակման ենթակա չէ: Այլ խոսքերով Այլեքս փաստաբանական գրասենյակի կողմից իր գործավարության իրականացման՝ մասնավորապես պայմանագրերում, հայցադիմումներում, լիազորագրերում և գրասենյակի կողմից ծառայությունների մատուցման շրջանակներում նախապատրաստվող այլ փաստաթղթերին գրասենյակի անվանման և այլ տվյալների գրառման որևիցե օրենսդրական արգելք, համենայն դեպս իրեն հայտնի չէ: Ինչ վերաբերվում է դատական ակտերի հարկադիր կատարման փուլում ներկայացվող լիազորագրերի նոտարական վավերացման անհրաժեշտության, ինչպես նաև լիազորագրում առկա լիազորություններն անդեմ, անորոշ լինելու վերաբերյալ բողոք բերող կողմի սուբյեկտիվ եզրահանգումների հիման վրա վերաքննիչ բողոքում ներկայացված փաստարկներին, ապա անհասկանալի է թե դրանք ինչպես կարող էին հանգեցնել վարչական դատարանում գործի քննության ընթացքում նյութական և դատավարական նորմերի այնպիսի խախտումների, որոնք կարող էին ազդել գործի ելքի վրա, ուստի բողոք բերող կողմի նշված հանգամանքները վկայակոչելը, որպես վերաքննիչ բողոքի փաստական հիմնավորումներ անհասկանալի է թվում: Բողոքարկող կողմը հիշատակվում է նաև մի շարք փաստական հանգամանքներ ինչպես օրինակ դատարանին ներկայացված հայցադիմումում առկա ձեռագիր նշումները, պետական տուրքի անդորրագրի ժամկետը կամ վճռի տրամադրման ժամկետներ չպահպանելը՝ չպարզաբանելով հնարավոր դատական սխալին դրանց առնչակցության հարցը: Նույն տրամաբանությամբ բազում փաստական հանգամանքներ են նաև շարադրված ի լրումն վերաքննիչ բողոքի ներկայացված գրությամբ՝ մասնավորապես դատական ծախսերի հիմնավորմանն ուղված պայմանագրերն առոչինչ կամ շինծու լինելու վերաբերյալ և այլն, գտնում են, որ նշված հարցի լուծումը այսպես թե այնպես չեր կարող ազդել գործի ելքի վրա, հետևաբար այդ և նմանատիպ այլ հարցերը ցանկացած պարագայում չեն կարող դիտարկվել որպես դատական սխալ,

ուստի դրանց շարադրումը վերաքննիչ բողոքում նույնպես ավելորդ է համարում: Այդուհանդերձ անդրադառնալով դրանցից մի քանիսին նշում է, որ նախ գործում առկա պետական տուրքի անդորրագրի ժամկետի հետ կապված բողոքարկող կողմի դիտարկումներն ունեն բավականին պարզ բացատրություն, այն է՝ պետական տուրքի վճարումն իրականացված լինելու վերաբերյալ ներկայացված փաստաթուղթը ոչ այլ ինչ է քան նախկինում վճարված, սակայն չկիրառված պետական տուրքի անդորրագիր և նշված փաստական հանգամանքի առթիվ բողոքարկող կողմի դեդուկտիվ եզրահանգումները, անհիմն են:
Ինչ վերաբերվում է իր՝ Արամ Վարուժանի Խաչատրյանի և Այլեքս փաստաբանական գրասենյակի միջև կնքված պայմանագիրը ոչ իրավաչափ լինելու բողոք բերող կողմի պնդմանը զուտ այն փաստական հանգամանքը հիմք ընդունելով, որ ինքը հանդիսանում է տվյալ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության համահիմնադիր, ապա նշված փաստարկը նույնպես անհիմն է համարում, քանի որ գործունակ իրավունքի ինքնուրույն սուբյեկտ իրավաբանական անձի և իրավունքի այլ ինքնուրույն գործունակ սուբյեկտ ֆիզիկական անձի միջև կնքված պայմանագիրը չի կարող համարվել ոչ իրավաչափ զուտ այն փաստի ուժով, որ տվյալ ֆիզիկական անձը հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի հիմնադիր կամ մասնակիցներից մեկը:
Միաժամանակ սույնով հայտնում է, որ երբևիցե միտում չի ունեցել "թաքցնել" Այլեքս ՍՊԸ-ի հիմնադիրներից մեկը լինելու հանգամանքը, որպիսի փաստն, ի դեպ, ազատ տեղեկատվություն է, որին կարող է ծանոթանալ ցանկացած անձ համապատասխան հարցում կատարելու միջոցով: Ավելին՝ բողոքարկող կողմի վկայակոչած պայմանագրերի առկայությունը զուտ առավել թափանցիկ է դարձնում թե՛ իր, թե՛ Այլեքս ՍՊԸ-ի գործունեությունը պետական, այդ թվում և, մասնավորապես հարկային վերահսկողության համար՝ ի դեպ առաջացնելով համապատասխան պարտավորություններ /հարկային, սոց.ապ./ երկու սուբյեկտների, այսինքն՝ թե՛ իր, թե՛ Այլեքս ՍՊԸ-ի համար:
Բողոք բերող կողմն իր վերաքննիչ բողոքով բողոքարկում է թիվ ՎԴ/0585/05/11 վարչական գործով 28.11.2011թ.-ին կայացված վճիռն ամբողջությամբ, այսինքն՝ վճիռը բողոքարկվում է նաև բողոք բերող կողմի համար բարենպաստ՝ կարճման մասով՝ խնդրելով բեկանել և փոփոխել այն, որպիսի հանգամանքը, համենայն դեպս իր համար, անհասկանալի է թվում: Ուստի, հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ Վարչական դատավարություն օրենսգրքի 117.13-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի պահանջներով, խնդրում են մերժել վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով անփոփոխ:

3. Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը
1) Հայաստանի Հանրապետության քաղաքացի Թագուհի Օհնիկյանը 2010 թվականի նոյեմբերի 22-ին դիմել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետին խնդրելով որդուն՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանին, ծնված 2008 թվականի փետրվարի 19-ին, տրամադրել Հայաստանի Հանրապետության կացության ժամանակավոր կարգավիճակ:
2) Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետը 2011 թվականի հունվարի 11-ի թիվ 2201-3724 գրությամբ Թագուհի Օհնիկյանին հայտնել է, որ նրա դիմումը 23.11.2010թ. բավարարվել է, և նա պետք է անձամբ ներկայանա Վարչություն՝ որդու ժամանակավոր կացության քարտը ստորագրությամբ առձեռն ստանալու համար, իսկ Հայաստանի Հանրապետությունից բացակայելու դեպքում խնդրում են տրամադրել արժանահավատ տեղեկություն՝ նշելով հասցեն:
3) 2010 թվականի նոյեմբերի 30-ի լիազորագրով Թագուհի Հակոբի

Օհնիկյանը լիազորել է Հասմիկ Հակոբի Օհնիկյանին
«1.Իմ անունունից հանդես գալու ՀՀ Ոստիկանության Անձնագրերի և վիզաների վարչություն, այդ թվում իմ փոխարեն ստանալ որդուս՝ Նարեկ Լուիս Ռենդոնի կացության կարգավիճակը հավաստող փաստաթղթերը:
2.Իմ անունից հանդես գալու ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի բոլոր տարածքային ստորաբաժանումներում, նոտարական գրասենյակներում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ստանալ և հանձնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, կատարել վճարումներ,
3. ներկայացնել ինձ դատական ակտերի հարկադիր կատարման փուլում, իրականացնելով իմ որպես պահանջատեր կամ պարտապան բոլոր իրավունքները, ներկայացնել և հետ վերցնել կատարողական թերթը, ստանալ բռնագանձված գույքը և/կամ դրամը, բողոքարկել հարկադիր կատարողի գործողությունների դեմ, ներկայացնել դիմում,
4. կատարել սույն լիազորությունների կատարման համար անհրաժեշտ բոլոր այլ գործողություններ, այդ թվում իմ անունից ստորագրել, ստանալ և ահանձնել փաստաթղթեր»:
4) Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը 2011 թվականի հունվարի 31-ի թիվ 25/01-3725 գրությամբ Հասմիկ Հակոբի Օհնիկյանին հայտնել է հետևյալը.
«22.11.2010թ. Թագուհի Հակոբի Օհնիկյանը դիմել է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն, խնդրելով իր որդուն՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանին, ծնված 19.02.2008թ. տրամադրել ՀՀ-ում կացության ժամանակավոր կարգավիճակ:
Դուք 12.01.2011թ. դիմել եք անձնագրային և վիզաների վարչություն՝ Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթը ստանալու համար՝ ներկայացնելով 30.11.2010թ-ին ստացած լիազորագիր:
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, վարչական վարույթը հարուցվում է անձի (անձանց) դիմումի կամ վարչական մարմնի նախաձեռնության հիման վրա (հարուցման փուլ), իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն, վարչական վարույթը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ): Թագուհի Օհնիկյանը ԱՎ վարչություն է դիմել 22.11.2010թ., իսկ Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանին կացության ժամանակավոր կարգավիճակ տալու մասին ԱՎ վարչությունում որոշում է կայացվել 23.11.2010թ.:
Դուք դիմել եք Անձնագրային և վիզաների վարչություն 12.01.2011թ., երբ վարչական վարույթը 23.11.2010թ. արդեն իսկ եզրափակված է եղելվարչական ակտի ընդունմամբ:
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, որպես կանոն, գրավոր վարչական ակտի հանձնումը պետք է կատարվի ակտը վարույթի մասնակիցներին ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով, սակայն Թագուհի Օհնիկյանը ԱՎ վարչություն չի ներկայացել և չի ստացել համապատասխան փաստաթուղթը»:
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն վարչական վարույթում վարույթի մասնիկցները կարող են մասնակցել ինքնուրույն, իրենց ներկայացուցիչների միջոցով կամ նրանց հետ միասին:
Նշված դեպքում վարչական վարույթն եզրափակված է, Դուք վարույթի մասնակից չեք, ինչպես նաև վարույթի ընթացքում որպես մասնակցի ներկայացուցիչ չեք հանդիսացել, հետևաբար Ձեր պահանջն իրավաչափ չէ և Ձեզ ներկայացված լիազորագրով չի կարող տրամադրվել Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթը»:
5) 2011 թվականի փետրվարի 4-ին «Այլեքս» սահմանափակ

պատասխանատվությամբ ընկերության (կատարող) և Հասմիկ Հակոբի Օհնիկյանի (Պատվիրատու) միջև կնքվել է ծառայությունների վճարովի մատուցման թիվ 040211 պայմանագիրը:
Հասմիկ Հակոբի Օհնիկյանը 2011 թվականի փետրվարի 20-ի լիազորագրով լիազորել է Արամ Վարուժանի Խաչատրյանին լինել իր ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության դատական բոլոր ատյաններում:
6) Թագուհի Օհնիկյանի կողմից 2011 թվականի մայիսի 18-ին տրված լիազորագրի համաձայն, որը հաստատվել է նոտարական կարգով՝ «տիկին Օհնիկյանը 30/11/2010թ. լիազորել է իր քույր տիկին Հասմիկ Հակոբի Օհնիկյանին, որպեսզի նա լիազորողի անունից կարողանար ստանալ լիազորողի որդի Իսպանիայի քաղաքացի Նարեկ Ռենդոն Օհնիկյանի Հայաստանում օրինական կացության համար անհրաժեշտ փաստաթուղթ:
Միաժամանակ տիկին Օհնիկյանը հայտարարում է, որ 30.11.2010թ. վերոնշյալ լիազորագիրը չի ձևակերպվել նոտարական կարգով, այլ կազմվել և ստորագրվել է անձամբ տիկին Թագուհի Օհնիկյանի կողմից:
Այսպիսով, սույնով, լիազորում է իր քույր տիկին Հասմիկ Հակոբի Օհնիկյանին, որպեսզի նա կարողանա իրականացնել ցանկացած գործողություն, որն անհրաժեշտ կլինի վերոնշյալ փաստաթուղթը լիազորողի անունից ստանալու համար»:

4. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները
Քննելով վերաքննիչ բողոքը դրանում նշված պահանջի սահմաններում՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ:
Բողոք բերած անձի պնդումն առ այն, որ Վարչական դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 29-րդ, 318-րդ և 321-րդ հոդվածների 1-ին մասերը, չի կիրառել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածը, 294-րդ հոդվածի 1-ին մասը, 296-րդ, 297-րդ և 299-րդ հոդվածները, 300-րդ հոդվածի 1-ին մասը, 305-րդ հոդվածը, 321-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, 323-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, որոնք պետք է կիրառեր, չի կիրառել Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասը, 43-րդ հոդվածի 1-ին մասը և 52-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր, չի կիրառել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել և կիրառել նույն օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասը, սխալ է մեկնաբանել և կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ, 58-րդ և 59-րդ հոդվածները և նույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը և 39-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել և կիրառել «Օտարերկրացիների» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը, 15-րդ հոդվածը, չի կիրառել 3-րդ հոդվածը, 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 14-րդ հոդվածի 1-ին մասը, 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, որոնք պետք է կիրառեր, չի կիրառել «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 57-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր, չի կիրառել Հայաստանի Հանրապետության կառավարության 07.02.2008թ. թիվ 134-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետը, նույն որոշման «ժամանակավոր կացության քարտի և մշտական կացության քարտի նկարագիրը և ձևը» հավելվածի 1-3-րդ կետերի դրույթները, որոնք պետք է կիրառեր, հայցվոր Հ.Օհնիկյանի պարագայում սխալ է մեկնաբանել և կիրառել Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները և չի կիրառել նույն օրենսգրքի 19-րդ

հոդվածի 4-րդ մասը, 21-րդ հոդվածի 1-ին մասը, 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերը, որոնք պետք է կիրառեր, չի կիրառել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածը, 41-րդ հոդվածի 1-ին մասը, 43-րդ հոդվածի 1-ին մասը, որոնք պետք է կիրառեր և Թագուհի Օհնիկյանի կողմից Հասմիկ Օհնիկյանի անվամբ հասարակ գրավոր ձևով 2010 թվականի նոյեմբերի 30-ին տրված լիազորագրի (լիազորագրի 3-րդ և 4-րդ կետերով վերապահված լիազորություններ) անվավերության առումով չի կիրառել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին պարբերությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածը, Վերաքննիչ դատարանը հիմնավոր չի համարում հետևյալ հիմնավորմամբ:
Սույն գործի փաստերի համաձայն՝ Թագուհի Օհնիկյանը 2010 թվականի նոյեմբերի 22-ին դիմել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը՝ իր որդուն՝ Իսպանիայի քաղաքացի, 2008 թվականի օգոստոսի 19-ին ծնված Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրելու խնդրանքով« որպիսի խնդրանքը 2010 թվականի նոյեմբերի 22-ին բավարարվել է:
Այնուհետև, Հասմիկ Օհնիկյանն իր անվամբ Թագուհի Օհնիկյանի կողմից 2010 թվականի նոյեմբերի 30-ին հասարակ գրավոր ձևով տրված լիազորագրի հիման վրա, 2011 թվականի հունվարի 12-ին դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը՝ ժամանակավոր կացության քարտը« ստանալու խնդրանքով:
Հասմիկ Օհնիկյանի 2011 թվականի հունվարի 12-ի դիմումին ի պատասխան ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը 2011 թվականի հունվարի 31-ի թիվ 25/01-3725 գրությամբ հայտնել է« որ Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելու մասին պահանջն իրավաչափ չէ և ներկայացված լիազորագրով վերջինիս Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը չի կարող տրամադրվել:
Թագուհի Օհնիկյանի կողմից 2011 թվականի մայիսի 18-ին տրվել է նոտարական կարգով հաստատված լիազորագիր հետևյալ բովանդակությամբ, «տիկին Օհնիկյանը 30/11/2010թ. լիազորել է իր քույր տիկին Հասմիկ Հակոբի Օհնիկյանին, որպեսզի նա լիազորողի անունից կարողանար ստանալ լիազորողի որդի Իսպանիայի քաղաքացի Նարեկ Ռենդոն Օհնիկյանի Հայաստանում օրինական կացության համար անհրաժեշտ փաստաթուղթ:
Միաժամանակ տիկին Օհնիկյանը հայտարարում է, որ 2010 թվականի նոյեմբերի 30-ի վերոնշյալ լիազորագիրը չի ձևակերպվել նոտարական կարգով, այլ կազմվել և ստորագրվել է անձամբ տիկին Թագուհի Օհնիկյանի կողմից:
Այսպիսով, սույնով, լիազորում է իր քույր տիկին Հասմիկ Հակոբի Օհնիկյանին, որպեսզի նա կարողանա իրականացնել ցանկացած գործողություն, որն անհրաժեշտ կլինի վերոնշյալ

փաստաթուղթը լիազորողի անունից ստանալու համար»:
Վերաքննիչ բողոքի հիմքում վկայակոչված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի տարբեր հոդվածներ, որոնք բողոք բերած անձը վկայակոչում է որպես դատարանի կողմից սխալ կիրառված և կիրառման ենթակա նորմեր, սակայն բողոքի հիմքում բարձրացված

իրավական հարցին պատասխանելու համար Վերաքննիչ դատարանը բողոքի հիմքի շրջանակներում պետք է քննարկման առարկա դարձնի հետևյալ իրավական հարցերը. արդյո՞ք, Հասմիկ Օհնիկյանի 2011 թվականի հունվարի 12-ի դիմումին ի պատասխան Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը 2011 թվականի հունվարի 31-ի թիվ 25/01-3725 գրությունը հանդիսանում է վարչական ակտ, թե ոչ: Արդյո՞ք, իրականացված վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտը ստանալու համար տրված հասարակ գրավոր լիազորագիրը համարվում է լիազորությունները պատշաճ հավաստող փաստաթուղթ, թե ոչ և վարչական ակտը կարող է հանձնվել վարույթի ընթացքում որպես մասնակցի ներկայացուցիչ հանդես չեկած անձին, թե ոչ:
Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները…:
Նշված հոդվածի վերլուծությունը վկայում է, որ վարչական դատավարության միջոցով դատական պաշտպանությունն ունի համապարփակ բնույթ: Դրա ծավալը տարածվում է հանրային իշխանության մարմինների ամբողջ գործունեության վրա: Սակայն հիմնական նախապայմանը սուբյեկտիվ իրավունքների խախտման պնդումն է:
Վարչական դատավարությունն առաջին հերթին ծառայում է մարդու և քաղաքացու իրավունքների, անձնական շահերի պաշտպանությանը: Դա նշանակում է, որ վարչական արդարադատություն կարող է հայցել միայն այն անձը (ֆիզիկական կամ իրավաբանական), որը գտնում է, որ հանրային իշխանության մարմինների գործունեությամբ կամ վարչարարությամբ իր իրավունքները կամ շահերն անմիջականորեն շոշափվել են:
Նույն օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը:
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:
Սույն իրավանորմի կանոնակարգման վերլուծությունից բխում է, որ վարչական ակտին բնորոշ հատկանիշ է արտաքին ներգործությունը, որոշակի անձանց վերաբերելը (անհատական ակտ), հանրային իրավունքի բնագավառին առնչվելը, անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն ուղղված լինելը:
Արտաքին ներգործության ներքո նկատի է առնվում այն, որ վարչական ակտը պետք է առնչվի այն անձին, որը կազմակերպական, աշխատանքային, ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում վարչական ակտ ընդունած վարչական մարմնի հետ: Վարչական ակտը բնորոշվում է անհատական ակտ լինելու հանգամանքով, քանի որ այն վերաբերում է որոշակի անձանց և ունի հստակորեն որոշված

	հասցեատեր: Վարչական ակտը բնորոշվում է նաև հանրային իրավունքի բնագավառին առնչվելու հանգամանքով, ինչը նշանակում է, որ այն պետք է լինի վարչական մարմնի կողմից և վարչական (հանրային) իրավունքի բնագավառում որոշակի հարցի լուծման նպատակով ընդունված ակտ: Վերոգրյալի համատեքստում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող Հասմիկ Օհնիկյանի 2011 թվականի հունվարի 12-ի դիմումին ի պատասխան Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության 2011 թվականի հունվարի 3-ի թիվ 25/01-3725 գրությունը վարչական ակտ չի հանդիսանում, քանի որ դրանում բացակայում է վարչական ակտին բնորոշ վերը նշված հատկանիշները, այն ոչ թե ընդունվել է հանրային իրավունքի բնագավառում որոշակի հարցի լուծման նպատակով, այլ դրանով ուղղակի մերժվել է արդեն իսկ ավարտված վարչական վարույթի ընթացքում կայացված բարենպաստ վարչական ակտի տրամադրումը երրորդ անձին՝ վարույթի մասնակից չլինելու, վարույթի ընթացքում որպես մասնակցի ներկայացուցիչ չհանդիսանալու, ներկայացված լիազորագրի պատշաճ չլինելու պատճառաբանությամբ: Այսինքն, վիճարկվող գրությունը վերաբերում է վարչական ակտի իրազեկման, հանձնման և հրապարակման իրավահարաբերություններին: Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե՝ վեճն ընդդատյա չէ վարչական դատարանին: Սույն վերլուծությունների հիման վրա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Վարչական դատարանը իրավացիորեն Հասմիկ Օհնիկյանի հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության« երրորդ անձ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու, Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ 25/01-4725 գրությունն անվավեր ճանաչելու պահանջների մասին վարչական գործի վարույթը Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ 25/01-4725 գրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասով կարճել է՝ այդ մասով վեճը վարչական դատարանին ընդդատյա չլինելու հիմքով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածը սահմանում է, որ. «1. Վարչական վարույթում վարույթի մասնակիցները կարող են մասնակցել ինքնուրույն, իրենց ներկայացուցիչների միջոցով կամ նրանց հետ միասին: 2. Վարչական վարույթում որպես վարույթի մասնակիցների ներկայացուցիչներ կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով լիազորված անձինք, այդ թվում՝ փաստաբաններ: Վարույթի անգործունակ մասնակիցներին վարչական վարույթում ներկայացնում են նրանց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված օրինական ներկայացուցիչները: 3. Լիազորված անձինք կամ օրինական ներկայացուցիչները վարչական մարմնի պահանջով պարտավոր են ներկայացնել լիազորագիր կամ օրինական ներկայացուցիչ լինելը հաստատող փաստաթուղթ: Լիազորագրի համար նոտարական վավերացում չի պահանջվում: 4. Լիազորագրի գործողությունն օրենքով սահմանված դեպքերում

դադարելիս վարչական վարույթ իրականացնող մարմինն այդ մասին պետք է գրավոր տեղեկացվի լիազորողի կամ լիազորված անձի միջոցով:
5. Վկան, փորձագետը, թարգմանիչը եւ այլ մարմինների ներկայացուցիչները վարչական վարույթում կարող են հանդես գալ միայն անմիջականորեն»:
Սույն իրավանորմով իրավունք է վերապահվում վարչական վարույթի մասնակցին վարույթին մասնակցել ինչպես ինքնուրույն, այնպես էլ ներկայացուցչի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով լիազորված անձանց միջոցով, իսկ վարույթի անգործունակ մասնակիցների համար սահմանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված օրինական ներկայացուցիչների միջոցով մասնակցելու պայման: Ընդ որում, ներկայացուցչի լիազորությունները հավաստող լիազորագրի նոտարական վավերացում չի պահանջվում, այսինքն, հասարակ գրավոր ձևով ձևակերպված լիազորագիրը վարչական վարույթում և վարչական մարմինների հետ փոխհարաբերություններում համարվում է լիազորությունները հավաստող պատշաճ փաստաթուղթ:
Սույն իրավանորմով վարույթի մասնակիցներին տրված ներկայացուցչի միջոցով հանդես գալու իրավունքից բացառություն է արվել միայն վկան, փորձագետը, թարգմանիչը և այլ մարմինների ներկայացուցիչները:
Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մեկ անձի (ներկայացուցչի) կողմից ուրիշ անձի (ներկայացվողի) անունից լիազորագրի« օրենքի կամ դրա համար լիազորված պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում է անմիջականորեն ներկայացվողի համար:
Նույն օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը« որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ հոդվածի համաձայն՝ «Տասնչորս տարեկան չդարձած անչափահասների (փոքրահասակների) փոխարեն գործարքները, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետում նշվածների, նրանց անունից կարող են կնքել միայն նրանց ծնողները, որդեգրողները կամ խնամակալները:
Վեցից մինչև տասնչորս տարեկան փոքրահասակներն իրավունք ունեն ինքնուրույն կնքել՝
1) մանր կենցաղային գործարքներ.
2) նոտարական վավերացում կամ գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում չպահանջող՝ անհատույց օգուտներ ստանալուն ուղղված գործարքներ.
3) օրինական ներկայացուցչի կամ վերջինիս համաձայնությամբ երրորդ անձանց կողմից որոշակի նպատակով կամ ազատորեն տնօրինելու համար տրամադրված միջոցները տնօրինելու գործարքներ:
Փոքրահասակի գործարքներով՝ ներառյալ նրա կողմից ինքնուրույն կնքված գործարքները, գույքային պատասխանատվություն են կրում նրա ծնողները, որդեգրողները կամ խնամակալը, եթե չապացուցեն, որ պարտավորությունն իրենց մեղքով չի խախտվել: Այդ անձինք, օրենքին համապատասխան, պատասխանատվություն են կրում նաեւ փոքրահասակի պատճառած վնասի համար»:
Սույն իրավանորմի վերլուծությունից հետևում է, որ մինչև 6 տարեկան փոքրահասակ երեխաների քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կրողները դրանց ամբողջ ծավալով նրանց օրինական ներկայացուցիչներն են՝ ծնողները, որդեգրողները, խնամակալները:
Այսինքն, փոքրահասակ երեխայի օրինական ներկայացուցիչը«

կրելով իր երեխայի քաղաքացիական իրավունքներն ու պարտականություններն ամբողջ ծավալով« նաև ունի ներկայացուցչության գործարք կնքելու իրավունք« այսինքն օրենքով սահմանված կարգով տրված լիազորագրի հիման վրա ներկայացուցչի միջոցով ներկայացվելու իրավունք:
Վերը նշված վերլուծությունների արդյունքում Վերաքննիչ դատարանը հանգում է հետևության, որ վարչական վարույթի փոքրահասակ մասնակցի օրինական ներկայացուցիչը« վարչական մարմնի հետ փոխհարաբերություններում իրավունք ունի իր հերթին հանդես գալու ներկայացուցչի միջոցով:
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի համաձայն վարչական մարմինը վարույթի մասնակիցներին վարչական ակտի ընդունման մասին իրազեկում է սույն հոդվածով նախատեսված հանձնման կամ հրապարակման եղանակով, գրավոր վարչական ակտը, ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին« դա կարող է իրականացվել պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, հասցեատիրոջը ստորագրությամբ առձեռն հանձնելու, ինչպես նաև՝ օրենքով սահմանված այլ եղանակներով:
Սույն կանոնակարգումից հետևում է« որ գրավոր վարչական ակտն ընդունելուց հետո« այն եռօրյա ժամկետում պետք է հանձնվի (դրա ընդունման մասին պետք է իրազեկվի) վարույթի մասնակցին (վարույթի մասնակիցը): Ընդ որում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վարչական ակտի իրազեկման, հանձնման և հրապարակման հարաբերությունները կարգավորող նորմերով և այդ հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերով նախատեսված չէ որևէ սահմանափակում, որ անձը, որը մասնակցել է վարչական վարույթին զրկված է վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտին իր ներկայացուցչի (նաև վարչական վարույթին չներգրավված ներկայացուցչի) միջոցով իրազեկվելու, ստանալու իրավունքից:
Հետևաբար, սույն գործով Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում Իսպանիայի քաղաքացի, 2008 թվականի օգոստոսի 19-ին ծնված Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի մոր՝ օրինական ներկայացուցիչ Թագուհի Օհնիկյանի դիմումի հիման վրա հարուցված և դիմումով խնդրարկված բարենպաստ վաչական ակտի ընդունմամբ ավարտված վարչական վարույթի ավարտից հետո, վարույթի անգործունակ մասնակից Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի օրինական ներկայացուցիչ Թագուհի Օհնիկյանը իրավաչափորեն իրացնելով իր՝ որպես իր փոքրահասակ որդու օրինական ներկայացուցչի իրավունքները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով՝ հասարակ գրավոր ձևով 2010 թվականի նոյեմբերի 30-ի Հասմիկ Օհնիկյանի անվամբ տվել է լիազորագիր իր անունից հանդես գալու ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում՝ այդ թվում իր փոխարեն իր որդու Նարեկ Լուիս Ռենդոնի կացության կարգավիճակը հավաստող փաստաթղթերը ստանալու նպատակով, իսկ Հասմիկ Օհնիկյանը« իր անվամբ Թագուհի Օհնիկյանի կողմից 2010 թվականի նոյեմբերի 30-ի հասարակ գրավոր ձևով տրված լիազորագրի հիման վրա« որպես վարչական վարույթի մասնակցի օրինական ներկայացուցչի ներկայացուցիչ, լիազորագրի հիման վրա, ներկայացվողի անունից, թվականի հունվարի 12-ի դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն՝ ընդունված վարչական ակտը՝ «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամանակավոր կացության ակտի ձևով ձևակերպված Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության

	կարգավիճակը հաստատող փաստաթուղթը« ստանալու՝ գործողություն կատարելու« իրավաչափ խնդրանքով, որպիսի խնդրանքը վարչական մարմնի կողմից ոչ իրավաչափորեն մերժվել է՝ խնդրարկված գործողությունը չի կատարվել: Անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկմանը, որ հայցադիմումը ներկայացրել է դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը, Վերաքննիչ դատարանն այն հիմնավոր չի համարում, քանի որ սույն վեճը ծագել է ընդունված բարենպաստ վարչական ակտը հանձնելու հետ կապված իրավահարաբերություններում, այսինքն որպես ներկայացուցիչ հանդես եկած անձի և վարչական մարմնի միջև, հետևաբար Հասմիկ Օհնիկյանն ունեցել է իրավունք ներկայացնելու հայցադիմում՝ նշված իրավահարաբերություններում իրավունքների դատական պաշտպանություն համար: Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Վարչական դատարանը, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ գնահատել է բոլոր ապացույցները և կիրառել դրանց նկատմամբ կիրառելի իրավական ակտերը: Վերոգրյալի հաշվառմամբ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքերը բավարար չեն Վարչական դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը բեկանելու համար: Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն՝ այն պետք է համարել լուծված: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 117.13-րդ և 117.14-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց 1. Վերաքննիչ բողոքը մերժել՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ՎԴ/0585/05/11 վարչական գործով կայացրած վճիռը թողնելով անփոփոխ: 2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված: Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան: ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ ԴԱՏԱՎՈՐ՝ ԴԱՏԱՎՈՐ՝ Լ.ՍՈՍՅԱՆ Ա.ՍԱՐԳՍՅԱՆ Հ.ԲԵԴԵՎՅԱՆ Սույն որոշումը « » _____ 2012 թվականին մտել է օրինական ուժի մեջ: ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Լ.ՍՈՍՅԱՆ
Դատական ակտի ամսաթիվը:	14-03-2012
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. (ՀՀ դրամ):	0
Ամսաթիվ:	06-04-2012
Ամսաթիվ:	16-04-2012
Էջերի քանակ:	2 հատորից. 1-ին հատորը՝ 144 թերթից, 2-րդ հատորը՝ 99 թերթից

Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	16-04-2012
Ուր:	Վճռաբեկ
Գրության համարը:	2612/12
Այլ նշումներ:	

Ամսաթիվ:	28-04-2012

Դատական Գործ N: ՎԴ/0585/05/11

Ամսաթիվ:	14-04-2012
Բողոք բերող անձը	
Անուն:	ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն
Հասցե:	Երևան,Մաշտոցի 13ա
Պետական տուրք:	0
Պատասխանի ստացման ամսաթիվը:	12-06-2012
Պատասխան բերող անձը	
Անուն	Հասմիկ
Ազգանուն	Օհնիկյան
Հասցե	ՀՀ
Ներկայացուցիչ	
Անուն	Արամ
Ազգանուն	Խաչատրյան
Հասցե	<<Այլեքս>>ՍՊԸ փաստաբանական գրասենյակ-Երևան,Երզնկյան փ. 81/1
Բողոքարկվող դատական ակտը:	ըստ հայցի Հասմիկ Օհնիկյանի ընդդեմ Վարչության, երրորդ անձ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի՝ Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու, Վարչության թիվ 25/01-4725 գրությունն անվավեր ճանաչելու պահանջների մասին
Գործի համարը:	ՎԴ/0585/05/11
Ում կողմից է բերվել բողոքը:	Պատասխանող

Գործի ստացման ամսաթիվը:	28-04-2012
Էջերի քանակը:	144
Գործին կից փաստաթղթերը:	2-99
Վճռաբեկ վարույթի համարը:	ՎԴ/0585/05/11

Ամսաթիվ:	28-04-2012
Նախագահող դատավոր	

Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	Արտակ Հակոբի Բարսեղյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	23-05-2012
Ամսաթիվ:	19-10-2012
Ծանուցագիրը ուղարկվել է:	11-10-2012
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համարը:	1
Այլ:	
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Ամսաթիվ:	19-10-2012
Դատական ակտը բեկանվել է ամբողջությամբ:	
Դատական ակտը բեկանվել է մասնակի:	
Այլ նշումներ:	
Դատական ակտ (վճիռ, որոշում):	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ ՀՀ վարչական վերաքննիչ Վարչական գործ թիվ ՎԴ/0585/05/11 դատարանի որոշում 2012թ. Վարչական գործ թիվ ՎԴ/0585/05/11 Նախագահող դատավոր՝ Լ. Սոսյան Դատավորներ՝ Ա. Սարգսյան Հ. Բեդևյան Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) նախագահությամբ մասնակցությամբ դատավորներ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի հոկտեմբերի 19-ին
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության (այսուհետ՝ Վարչություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.03.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հասմիկ Օհնիկյանի ընդդեմ Վարչության, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն)՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի՝ Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու, Վարչության թիվ 25/01-4725 գրությունն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի դատավարական նախապատմությունը
Դիմելով դատարան՝ Հասմիկ Օհնիկյանը պահանջել է պարտավորեցնել Վարչությանն իրեն տրամադրել Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի՝ Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը, անվավեր ճանաչել Վարչության թիվ 25/01-4725 գրությունը, ինչպես նաև դատական ծախսերին անդրադառնալիս ծախսերի մեջ ներառել նաև ներկայացուցչի ողջամիտ վարձատրության 170.000 ՀՀ դրամը:
ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Բաբայան) (այսուհետ՝ Դատարան) 28.10.2011 թվականի վճռով Վարչության թիվ 25/01-4725 գրությունն անվավեր ճանաչելու մասով գործի վարույթը Դատարանին ընդդատյա չլինելու հիմքով կարճվել է, իսկ Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելուն Վարչությանը պարտավորեցնելու մասով բավարարվել է:
Միաժամանակ վճռվել է Հայաստանի Հանրապետությունից բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես ներկայացուցչին վճարվող գումար:
ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.03.2012 թվականի որոշմամբ Վարչության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 28.10.2011 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:
Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վարչությունը:
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հասմիկ Օհնիկյանի ներկայացուցիչ Արամ Խաչատրյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը
Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.
Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 59-րդ հոդվածները, ՀՀ կառավարության 07.02.2008 թվականի թիվ 134-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու (կացության կարգավիճակը երկարաձգելու) դիմումի քննարկման» կարգի 6-րդ կետը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 297-

	րդ, 299-րդ, 300-րդ հոդվածները, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ, 24-րդ հոդվածները: Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով. Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը կիրառելի և թույլատրելի է միայն վարչական վարույթի ընթացքում հասարակ գրավոր ձևի լիազորագրով հանդես գալու պարագայում, այլ ոչ թե վարչական վարույթից դուրս՝ վարչական մարմինների հետ փոխհարաբերություններում, այդ թվում՝ վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտն ստանալու հետ կապված փոխհարաբերություններում: Այսինքն՝ որևէ իրավական ակտով նախատեսված չէ վարչական վարույթից դուրս, հասարակ գրավոր ձևով տրված լիազորագրով, երրորդ անձի կողմից միայն օտարերկրացուն տրվող իրավաստեղծ պաշտոնական փաստաթուղթը ստանալու իրավունքը և այդ իրավունքն իրականացնելու կարգն ու պայմանները: Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի օրինական ներկայացուցիչ Թագուհի Օհնիկյանին հասցեագրված 31.01.2011 թվականի թիվ 25/01-3724 գրությամբ Վարչությունն իրազեկել է, որ 22.11.2010 թվականի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը 23.11.2010 թվականին եզրափակվել է բարենպաստ վարչական ակտի ընդունմամբ և հրավիրվել է այն առձեռն ստորագրությամբ հանձնելու համար, միաժամանակ նշելով՝ Հայաստանի Հանրապետությունից բացակայելու դեպքում տրամադրել տեղեկատվություն գտնվելու վայրի մասին: Սակայն Թագուհի Օհնիկյանը չի ներկայացել և որևէ կերպ չի արձագանքել: Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.03.2012 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել: 2.1 Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը Բողոք բերած անձի մատնանշած իրավական ակտերից և ոչ մեկում չկա որևէ իրավական կարգավորում, որով օրինական ներկայացուցչի լիազորված անձի իրավասությունները հավաստող լիազորագրի համար պահանջվում է նոտարական վավերացում: 3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը. 1) 22.11.2010 թվականի դիմումով Թագուհի Օհնիկյանը Վարչությունից խնդրել է իր որդուն՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանին՝ ծնված 19.02.2008 թվականին, տրամադրել Հայաստանի Հանրապետությունում կացության ժամանակավոր կարգավիճակ (2-րդ հատոր, գ.թ. 26): 2) 30.11.2010 թվականի հասարակ գրավոր ձևով կազմված լիազորագրի 1-ին կետով Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի օրինական ներկայացուցիչ Թագուհի Օհնիկյանը լիազորել է Հասմիկ Օհնիկյանին հանդես գալու Վարչությունում, այդ թվում՝ ստանալու Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի կացության կարգավիճակը հավաստող փաստաթղթերը (1-ին հատոր, գ.թ. 15): 3) 12.01.2011 թվականի դիմումով Հասմիկ Օհնիկյանը Վարչությունից խնդրել է տրամադրել Թագուհի Օհնիկյանի որդու՝ Նարեկ Լուիս Ռենդոն Օհնիկյանի կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթը (2-րդ հատոր, գ.թ. 31):

4) Հասմիկ Օհնիկյանին հասցեագրված 31.01.2011 թվականի թիվ 25/01-4725 գրությամբ Վարչությունը հայտնել է, որ «22.11.2010 թվականին Թագուհի Օհնիկյանը դիմել է Վարչություն խնդրելով իր որդուն՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանին՝ ծնված 19.02.2008 թվականին, տրամադրել Հայաստանի Հանրապետությունում կացության ժամանակավոր կարգավիճակ: Դուք 12.01.2011 թվականին դիմել եք վարչություն Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթը ստանալու համար՝ ներկայացնելով 30.11.2010 թվականի լիազորագիրը: … Թագուհի Օհնիկյանը Վարչություն է դիմել 22.11.2010 թվականին, իսկ Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանին կացության ժամանակավոր կարգավիճակ տալու մասին Վարչությունում որոշում է կայացվել 23.11.2010 թվականին: Դուք դիմել եք Վարչություն 12.01.2011 թվականին, երբ վարչական վարույթը 23.11.2010 թվականին արդեն իսկ եզրափակված է եղել վարչական ակտի ընդունմամբ: … որպես կանոն գրավոր վարչական ակտի հանձնումը պետք է կատարվի ակտը վարույթի մասնակիցներին առձեռն հանձնելու միջոցով, սակայն Թագուհի Օհնիկյանը Վարչություն չի ներկայացել և չի ստացել համապատասխան փաստաթուղթը: ... Նշված դեպքում վարչական վարույթը եզրափակված է, Դուք վարույթի մասնակից չեք, ինչպես նաև վարույթի ընթացքում որպես մասնակցի ներկայացուցիչ չեք հանդիսացել, հետևաբար Ձեր պահանջն իրավաչափ չէ, և Ձեզ ներկայացված լիազորագրով չի կարող տրամադրվել Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթը» (1-ին հատոր, գ.թ. 12-13):
5) Թագուհի Օհնիկյանին հասցեագրված 31.01.2011 թվականի թիվ 25/01-3724 գրությամբ Վարչությունը հայտնել է, որ «… Ձեր դիմումը 23.11.2010 թվականին բավարարվել է, և Դուք պետք է անձամբ ներկայանաք Վարչություն Ձեր որդու ժամանակավոր կացության քարտը ստորագրությամբ առձեռն ստանալու համար: Հայաստանի Հանրապետությունից Ձեր բացակայելու դեպքում խնդրում ենք տրամադրել արժանահավատ տեղեկատվություն՝ նշելով Ձեր հասցեն» (2-րդ հատոր, գ.թ. 30):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները
Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.
Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է պատասխանել այն իրավական հարցին, թե արդյո՞ք կարող է կացության կարգավիճակը հաստատող քարտը հանձնվել վարչական վարույթի մասնակցի օրինական ներկայացուցչի անունից հասարակ գրավոր ձևով ձևակերպված լիազորագիր ներկայացրած անձին:
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է:
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթում որպես վարույթի մասնակիցների ներկայացուցիչներ կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով լիազորված անձինք, այդ թվում՝ փաստաբաններ:
Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ ներկայացուցչությանը վերաբերող դրույթները կիրառելի են բացառապես վարչական վարույթի շրջանակներում վարույթի մասնակիցների՝ ներկայացուցիչների միջոցով հանդես գալու հարաբերությունների նկատմամբ: Նույն օրենքը չի նախատեսում վարչական վարույթից դուրս վարչական

մարմնի հետ ներկայացուցչի միջոցով հանդես գալու հարաբերությունների որևէ կանոնակարգում:
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:
«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու դիմումի քննարկման կարգը, դիմումի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի թիվ 134-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու (կացության կարգավիճակը երկարաձգելու) դիմումի քննարկման» կարգը:
Վերոնշյալ դրույթների համակարգային մեկնաբանությունը թույլ է տալիս եզրահանգել, որ ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու դիմումի քննարկումը վարչական վարույթի ինքնուրույն տեսակ է, և վերջինիս առանձնահատկությունները սահմանվում են «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով և դրա հիման վրա ընդունված ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի թիվ 134-Ն որոշմամբ ընդունված կարգով:
Հետևաբար կացության կարգավիճակը հաստատող քարտի ստացման հետ կապված հարաբերությունների կարգավորումը անհրաժեշտ է դիտարկել նշված իրավական ակտերի լույսի ներքո:
«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ժամանակավոր, մշտական և հատուկ կացության կարգավիճակները հաստատող փաստաթղթերն են համապատասխանաբար ժամանակավոր կացության քարտը, մշտական կացության քարտը և հատուկ անձնագիրը, որոնց ձևերը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի թիվ 134-Ն որոշմամբ ընդունված կարգի 3-րդ հավելվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության և մշտական կացության քարտերը՝ 80x120մմ չափսի, Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացու ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակը հաստատող հիմնական փաստաթղթեր են:
ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի թիվ 134-Ն որոշմամբ ընդունված կարգի 2-րդ հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ օտարերկրացուն Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ տալու կամ կարգավիճակ տալը մերժելու որոշման կրկնօրինակն անձնագրային և վիզաների վարչությունը որոշումն ընդունելուց հետո եռօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան սույն կարգի 1-ին կետում նշված ժամկետում ուղարկում է կացության կարգավիճակ ստանալու համար դիմած օտարերկրացուն:
Վերաքննիչ դատարանի որոշման հիմքում դրվել է այն պատճառաբանությունը, որ գրավոր վարչական ակտն ընդունելուց հետո, այն եռօրյա ժամկետում պետք է հանձնվի (դրա ընդունման մասին պետք է իրազեկվի) վարույթի մասնակցին, ընդ որում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վարչական ակտի իրազեկման, հանձնման և հրապարակման հարաբերությունները կարգավորող նորմերով և այդ հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերով նախատեսված չէ որևէ սահմանափակում, որ անձը, որը մասնակցել է վարչական վարույթին, զրկված է վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտին իր ներկայացուցչի (նաև վարչական վարույթին չներգրավված ներկայացուցչի) միջոցով իրազեկվելու,

ստանալու իրավունքից, հետաբար վարույթի անգործունակ մասնակից Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի օրինական ներկայացուցիչ Թագուհի Օհնիկյանը, իրավաչափորեն իրացնելով իր՝ որպես իր փոքրահասակ որդու օրինական ներկայացուցչի իրավունքները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով՝ հասարակ գրավոր ձևով 30.11.2010 թվականին Հասմիկ Օհնիկյանի անվամբ տվել է լիազորագիր իր անունից հանդես գալու Վարչությունում՝ այդ թվում իր փոխարեն իր որդու կացության կարգավիճակը հավաստող փաստաթղթերը ստանալու նպատակով:
Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ վերոնշյալ իրավական ակտերում բացակայում է կացության կարգավիճակը հաստատող քարտի տրամադրման այնպիսի կանոնակարգում, որը կբացառեր որևէ այլ կերպ, քան կացության կարգավիճակ հայցող անձին քարտն ուղարկելու հնարավորություն: Հետևաբար հարկ է հաշվի առնել այն, որ այն դեպքերում, երբ կացության կարգավիճակ հայցող անձը վարչական վարույթին մասնակցել է իր ներկայացուցչի միջոցով, և վերջինս ներկա է գտնվել վարույթին, կացության քարտը կարող է հանձնվել ներկայացուցչին, անկախ այն հանգամանքից, լիազորագիրը վավերացված է նոտարի կողմից, թե ոչ:
Մյուս կողմից Վճռաբեկ դատարանը, կարևորելով կացության կարգավիճակը հավաստող քարտի տրամադրման առանձնահատկությունները, հաշվի առնելով այն, որ նշված քարտը Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացու ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակը հաստատող հիմնական փաստաթուղթն է, գտնում է, որ ներկայացուցչի միջոցով վարույթին մասնակցելու դեպքից էականորեն տարբերվում է կացության քարտը վարչական վարույթին չմասնակցած ներկայացուցչին հանձնելը, երբ վերջինս ներկայացնում է հասարակ գրավոր ձևով տրված լիազորագիր: *Վերջին դեպքում բացակայում է որևէ իրավահաստատող գործողություն, որը կվկայեր լիազորագիրը կոնկրետ իրավատիրոջ կողմից տալու հանգամանքը, ինչը ռիսկ է պարունակում այնքանով, որքանով կացության քարտը կարող է հանձնվել մի անձի, ով իրապես լիազորված չէ այն ստանալու*:
Մյուս կողմից կացության քարտը բացառապես հասցեատիրոջը հանձնելու պահանջն անձին անհարկի զրկում է իր իրավունքները ոչ անձամբ, ներկայացուցչի միջոցով իրացնելուց: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն իրողությունը, որ կացության կարագավիճակ հայցող անձինք միշտ չէ, որ գտնվում են Հայաստանի Հանրապետությունում և հնարավորություն ունեն ներկայանալ և անձամբ ստանալ կացության քարտը:
Նշված պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ կացության կարգավիճակ հայցող անձը վարչական վարույթին մասնակցել է իր ներկայացուցչի միջոցով, և վերջինս ներկա է գտնվել վարույթին, կացության քարտը կարող է հանձնվել ներկայացուցչին, անկախ այն հանգամանքից, լիազորագիրը վավերացված է նոտարի կողմից, թե ոչ, իսկ այն դեպքում, երբ կացության կարգավիճակ հայցող անձը չի մասնակցել վարչական վարույթին, չի ունեցել ներկայացուցիչ, ով մասնակցել է վարչական վարույթին, զրկված չէ կացության քարտը ներկայացուցչի միջոցով ստանալու իրավունքից, եթե վերջինիս լիազորությունները հավաստված են նոտարական կարգով վավերացված լիազորագրով:
Համադրելով վերը նշված մեկնաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կացության կարգավիճակ տրամադրելու որոշումը, ինչպես նաև կացության քարտը (այդ թվում՝ ժամանակավոր կացության քարտը) անձամբ տրվում է նման կարգավիճակ հայցող օտարերկրացուն, կամ նոտարական կարգով վավերացված լիազորագիր ունեցող ներկայացուցչին, ուստի մասնակցի կամ վերջինիս օրինական ներկայացուցչի անունից հասարակ գրավոր ձևով ձևակերպված լիազորագիր ներկայացրած անձին չի կարող տրամադրվել կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը:

Վերոնշյալ հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը: Վերոգրյալից ելնելով և սույն գործի փաստերի համադրմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական վարույթի արդյունքում վարչական ակտն ընդունելուց, այսինքն՝ վարչական վարույթն ավարտվելուց հետո, Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանին տրված Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթը կարող էր տրամադրվել վերջինիս օրինական ներկայացուցիչ Թագուհի Օհնիկյանին կամ Թագուհի Օհնիկյանի այն ներկայացուցչին, ով կներկայացներ իր լիազորությունները հավաստող նոտրական կարգով վավերացված լիազորագիր:

Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները հերքվում են վերը նշված պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.
ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:
Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.03.2012 թվականի որոշման՝ ՀՀ վարչական դատարանի 28.10.2011 թվականի վճռի հայցը բավարարելու մասն անփոփոխ թողնելու մասը և այդ մասով փոփոխել. Հասմիկ Օհնիկյանի հայցն ընդդեմ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ Իսպանիայի քաղաքացի Նարեկ Լուիս Ալբերտոյի Ռենդոն Օհնիկյանի՝ Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին մերժել:
2. Հասմիկ Օհնիկյանից հօգուտ ՀՀ ոստիկանության անձնագրային և

	վիզաների վարչության բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար: Հասմիկ Օհնիկյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վճռաբեկ դատարանի 23.05.2012 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար: 3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման: Նախագահող՝ Դատավորներ՝ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ Ս. ԱՆՏՈՆՅԱՆ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ Մ. ԴՐՄԵՅԱՆ Գ. ՀԱԿՈԲՅԱՆ Է. ՀԱՅՐԻՅԱՆ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Դատական ակտի ամսաթիվը:	19-10-2012
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. տուրքի չափը (ՀՀ դրամ):	20000
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	25-10-2012
Գործի առաքման ամսաթիվը:	07-11-2012
Դատարան:	Վարչական
Այլ նշումներ:	2 հատոր

Փաստաթուղթը տպվել է www.datalex.am պորտալի կողմից 15 Սեպտեմբեր 2015